Մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունները հետխորհրդային Հայաստանում

Տիգրանյան Ա. Հ.
ԵՊՀ, մշակութաբանության բաժին (Հայաստան, Երևան)
armine.hayk2014@gmail.com

Վճռորոշ բառեր՝ մշակութային ժառանգության պահպանություն, պահպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնություններ, մշակույթի պետական պահպանություն, պահպանության ոչ պետական համակարգ, ժառանգության համայնք, քաղաքացիական հասարակություն, հանրային տարածք, սոցիալական կապիտալ։

Гражданские инициативы направленные на сохранению культурного наследия в постсоветской Армении

Тигранян А.А.
Кафедра культурологии ЕГУ (Армения, Ереван)
armine.hayk2014@gmail.com

Резюме: Возникновение и рост гражданских инициатив, направленных на сохранение культурного наследия, за последние 11 лет можно считать новым «пробуждением» сознания общества, и утверждать, что оно было обусловлено как новым поколением, которое не проживало в советском режиме и не испытывало его непосредственно, так и определенным отказом от государственных подходов культурной политики РА. Росту инициатив в области культурного наследия также способствовала международная культурная политика, которая в значительной степени подчеркивает функцию сохранения общественной культуры. Их росту также поспособствовал развитие новых информационных и коммуникационных технологий. Они смогли повлиять на социально-культурные и политические события в Армении, смогли внести вклад в сохранение культурного наследия и создать новую гражданскую культуру. Фактически, то, что в течение длительного времени не удалось выполнить негосударственных организациях и западные донорам, выполнили гражданские инициативы. Появление гражданских инициатив направленных на сохранение культурного наследия в Армении указало на развитие гражданского общества, и изменило о ней советское восприятие и практику. Хотя гражданские инициативы сосредоточены на конкретных вопросах, их борьба сосредоточена на больших проблемах, таких как коррупция, олигархические рычаги, отсутствие закона, разочарование политиками и другие вопросы. В статье также рассказывается о роли гражданских инициатив в реальных ситуациях, таких как укрепление социального капитала и демократия, связывая все это с концепцией сохранения культурного наследия. Хотя гражданские инициативы смогли повлиять на культурную политику и расширить участие общественности в этой области, тем не менее им все еще необходимо преодолеть фундаментальные проблемы.
Ключевые слова: сохранение культурного наследия, гражданские инициативы на сохранению культурного наследия, общественное пространство, гражданское общество, социальный капитал, государственная охрана культуры, негосударственная система охраны культуры, сообщество наследия.

Civic initiatives (grassroot movements) aimed at the preservation of cultural heritage in Post-Soviet Armenia

Tigranyan A.H.
YSU, Chair of culturology (Armenia, Yerevan)
armine.hayk2014@gmail.com

Abstract: The emergence and growth of civic initiatives (grassroot movements) aimed at the preservation of cultural heritage can be considered a new "awakening" of the society's consciousness over the past 11 years, and claim that it was conditioned by a new generation that did not live in the Soviet regime and did not directly experience it as well as by a certain refusal from the state policy approaches of the RA cultural policy. International cultural policies have also contributed to the growth of cultural heritage initiatives, which greatly emphasizes the function of public cultural preservation. The development of new information and communication technologies also contributed to their growth. They were able to promote the socio-cultural and political developments in Armenia, to contribute to the preservation of cultural heritage and create a new civic culture. In fact, what has not been done for a long time by the NGOs and

western donors, grassroot movements have succeeded. The emergence of grassroot movements in Armenia has shown the development of civil society and changed Soviet perceptions and practices about it. Though grassroot movements are focused on specific issues, their struggle is focused on more problems, corruption, oligarchic levers, lack of law, disappointment with politicians and other issues. The article also outlines the role of grassroot movements in real-life situations such as strengthening social capital and democracy by linking it to the concept of preserving cultural heritage. Although the civic initiatives was able to influence cultural policy and expand public participation in the field, they still need to overcome fundamental issues.

Keywords: preservation of cultural heritage, state protection of culture, civil initiatives (grassroot movements), civil society, non-governmental organizations, public sphere, social capital, non-state protection system of cultural heritage, heritage community.

Հոդվածը ներկայացնում է մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունների բնույթը, առաջացման հիմքերը, ընթացքը, զարգացման հեռանկարները և վերջինիս խոչընդոտները Հայաստանում: Քաղաքացիական նախաձեռնությունների ուսումնասիրության համար անհրաժեշտ ենք համարել քննել քաղաքացիական հասարակության գործունեության տարբեր ոլորտները. ինչպես հասարակական կազմակերպությունները, այնպես էլ քաղաքացիական նախաձեռնությունները: Հոդվածում ներկայացված է մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքացիական ակտիվիզմը՝ սկսած 1980-ական թվականներից մինչև մեր օրերը, որոնք ընթացան մի քանի փուլերով և բազմաթիվ խմորումներից հետո միայն վերջին 11 տարում ցուցաբերեցին իրական ակտիվություն:

Քաղաքացիական նախաձեռնությունների բնույթը: Քաղաքացիական նախաձեռնությունները[1] (այսուհետ՝ ՔՆ) ներքնից ձևավորված, կամավորական, անկուսակցական խմբեր են՝ սովորաբար բաղկացած 20-ից մինչև մի քանի հարյուր հոգուց[2]: Նրանք համախմբվում են՝ միասին առաջ քաշելու որևէ հարց և բարձրացնելու հանրության իրազեկվածությունը դրա վերաբերյալ: Մասնակիցների տարիքը ընկած է 20-ից-45-ի միջև, որոնց մեծ մասը միջին դասի, կրթված մասնագետներ կամ համալսարանական ուսանողներ են: ՔՆ-ը, որպես կանոն, ունենում է ակտիվիստների միջուկ՝ ոչ ֆորմալ առաջնորդությամբ: Վերջինիս կառուցվածքը հորիզոնական է, իսկ որոշումների ընդունումը հիմնված է համաձայնության վրա: Ինչ վերաբերում է ՔՆ-ի անդամներին, ապա այն ընդգրկում է թե՛ ակտիվ և թե՛ պասիվ՝ «պայմանական» անդամների: Նրանց միջև տարբեր է ներգրավվածության և մասնակցության գործառույթների մակարդակը: Կան մարդիկ, ովքեր գտնում և ապահովում են անհրաժեշտ ռեսուրսները և կան ավելի թույլ ակտիվություն ունցողները, ովքեր, օրինակ կարող են գրել նամակներ ընտրված պաշտոնյաներին[3]: ՔՆ-ը երրորդ դասի[4] մարգինալ

[1] Քաղաքացիական նախաձեռնությունները արևմտյան գրականության մեջ հայտնի են “grassroots movement” անվանմամբ:

[2] Դ. Վոլլեբեկը քաղաքացիական նախաձեռնությունների անդամների թիվը սահմանում է 1-ից մինչ 30 մարդ (Wollebaek, D. Change in Local Voluntary Associations. Ph.D. Thesis. Bergen: University of Bergen. 2009):

[3] Barkan, S. E. "Explaining Public Support for the Environmental Movement: A Civic Voluntarism Model”, 2004, Social Science Quarterly, University of Maine, pp. 913-937.

4 Երրորդ դաս ասելով նկատի ունենք քաղաքացիական հասարակությունը, որը հանրային կյանքի կազմակերպման ու կառավարման գործընթացներում կարևոր առաքելություն իրականացնող, կամավորության և շահերի ընդհանրության սկզբունքով ձևավորված, ինքնավարությամբ գործող ոչ կառավարական հասարակական կազմակերպություններն են: Նրանք անկախ են պետական իշխանության ուղղակի միջամտությունից և ազատ՝ կամքի դրսևորման տեսանկյունից: Հանդես են գալիս քաղաքական համակարգի նկատմամբ հասարակության պահանջների և աջակցության ֆիլտր: Ֆ. Վեֆորտի պնդմամբ, այն պատնեշ է «հրեշավոր» պետության դեմ և հակակշռում է վերջինիս (Weffort. F. C., “Why Democracy?, in Stephen A. (ed) “Democratizing Brazil: Problems of Transition and Consolidation”. New York: Oxford University Press, 1989, p. 349). Քաղաքացիական հասարակությունը պետությունից ու տնտեսությունից դուրս գտնվող կոլեկտիվ նպատակների համար ձևավորված մարդկանց խումբ է (Alison van Rooy, A. Civil Society and the Aid Industry: The Politics and Promise, London: Earthscan. 1998, p.30.): Ռոբերտ Փաթմենի մոտեցմամբ այն ընտանիքից դուրս գտնվող մարդկանց խումբ է, որոնք միմյանց հետ կապված են ոչ թե արյունակցական, այլ արդարության և համերաշխության հորիզոնական կապերով; Նրանք պետության հետ հարաբերություններում ստանձնեցին զուգակշռման և հակակշռման, քաղաքացիների շահերի ինտեգրման և քաղաքական որոշումների մակարդակում դրանց ներկայացման գործառույթներ: (Putnam, R., D. Making Democracy Work: Civic Traditions in Modern Italy. Princeton, New Jersey: Princeton University Press. 1993, pp 83-99.): Անտոնիո Գրամշին պնդում էր, որ ՔՀ-ը պետությունից առանձին «գոտի» է, որը միարժամանակ և՛ մարտահրավեր է նետում նրան և՛ իր սկզբունքներով «պաշտպանում» է իշխող կարգերը՝ հիշեցնելով օրինականության մասին (Gramsci, A., Selections from the Prison Notebooks, ed.

խմբերի կողմից ձևավորված և ղեկավարված, բայց միևնույն ժամանակ հասարակության կառուցվածքային հիմնական կաղապար հանդիսացող շարժումներ են։ Նրանք ծնվում են փոքր գյուղական կամ քաղաքային հարևանական համայքներում, որտեղ «ընդհանուր» կամ «հասարակ» մարդն է ապրում[5]։ Վ. Կեմպտոնը բնորոշում է ՔՆ-ը որպես անհատների կողմից ինքնաբերաբար ձևավորվող և հատուկ նպատակներով առաջնորդվող շարժումներ[6]։ Այն կամավորական ակտիվիզմ է լոկալ տիրույթում[7]։ Բայց հատկանշական է, որ նրանց բարձրացրած խնդիրները ինչքան էլ ունենան լոկալ նշանակություն, ուղղված են համընդհանուր շահերի պաշտպանությանը, երբեմն նաև ազգային և միջազգային մակարդակով։ ՔՆ-ները իրենց իրավուքների պաշտպանության համար մարտահրավեր են նետում պետությանը, և միևնույն ժամանակ հնարավորություններ ստեղծում ժողովրդավարության հաստատման համար։

Այս շարժումները ամբողջ աշխարհում սկսել են գործել և մեծ թափ ստանալ 1970-ականների վերջին՝ կենտրոնանալով շրջակա միջավայրի, մշակութային արժեքների պահպանության, մարդու իրավունքների և այլ խնդիրների վրա՝ ճանաչելով նաև այդ հարցերի համընդհանուր և միջազգային քաղաքականության միասնական լուծման մեխանիզմների անհրաժեշտությունը։ Քանի որ համայնքի կենտրոնական ուժը գտնվում է հենց նրանց ձեռքում, ուստի նրանք առավել մեծ լեգիտիմություն ունեն ներկայացնելու վերջինիս «շահերը»[8]։ Մ. Էդվարդսը տեսնում է նախաձեռնությունների հիմնական առանձնահատկությունը հենց նշված վերջին կետում և նշում, որ համայքների խնդիրների հանդեպ նրանց ունեցած լեգիտիմ իրավունքը իրենց գործողություններն ու կառուցվածքը ավելի հավասարակշռված են դարձնում։ Նրանք ցուցադրում են քաղաքականության այլընտրանք, լուծումներ և ռազմավարություն, քանզի ունեն փորձառություն ներկայացվող խնդիրների հանդեպ։ Քաղաքականություն իրականացնելու ճանապարհին նրանք «քայլում են առջևից», իսկ ուժի և իշխանության հանդեպ ունեն ավելի կենտրոնացված մոտեցում[9]։ Չնայած ՔՆ-ների գործողությունները հիմնականում ուղղված են ոչ քաղաքական խնդիրներին ու դաշտերին, այնուամենայնիվ նրանք հնարավորություն ունեն քաղաքական գործողության։ ***Այսպիսով, ՔՆ-ը համայնական ակտիվություն է, որն ունի քաղաքական գործողության հնարավորություն։***

Ամերիկացի սոցիոլոգ Դեվիթ Սմիթը տալիս է որոշակի լայն բնորոշում ՔՆ-ի առաքելությանն ու դերին։ Նրա կարծիքով այս խմբերը ուղիղ կերպով կապվում են քաղաքացիական հասարակության հետ և հիմքում ունեն գաղափարներ, ինչպիսիք են հավասարությունը, հանդուրժողականությունը, ազատությունը կամ բռնության մերժումը։ Այս ամենի հետ մեկտեղ նրանք ներառում են դեպքեր, երբ հնարավոր է «կոտրել» օրենքները հանուն «օգտակար» նպատակների (մարդու իրավունքների պաշտպանություն, մշակութային և բնական ժառանգության պահպանություն, արդարության հաստատումը և այլն)։ Դ. Սմիթը նշում է, որ ժամանակային տեսանկյունից ՔՆ-ները սովորաբար գործում են են կարճ ժամանակային տիրույթում, բայց երկար գործելու արդյունքում դառնում են ավելի բարդ և կազմակերպված միավորումներ՝ ի վերջո վերածվելով շահույթ չհետապնդող կազմակերպության[10]։ Այս պարագայում ՔՆ-ը անհետանում է և նոր, ավելի պրոֆեսիոնալ կազմակերպություն է հաստատվում՝ քաղաքացիական էթի-

by Q. Hoare and G. Nowell Smith. London: Lawrence and Wishart. 1971. p. 285.)։

[5] Batliwala, S., "Grassroots Movements as Transnational Actors: Implications for Global Civil Society." Voluntas: International Journal of Voluntary and Nonprofit Organizations 13(4): 2002, pp.393-409. (p. 396).

[6] Kempton, W., D. C. Holland, et al. (2001). "Local Environmental Groups: A Systematic Enumeration in Two Geographical Areas." Rural Sociology ,66(4), pp. 557-578.

[7] Rochester, C., Paine, A.E., Hewlett, S. Zimmeck, M., "Volunteering and Society in the 21st Century". Palgrave: Macmillan, 2010, p.38-42.

[8] Edwards, M., Global civil society and community exchanges: A different form of movement. Environ. Urban. 13(2), 2001, pp. 145–149 (p. 145).

[9] The Merriam-Webster Collegiate Dictionary, Elevent edition, Incorporated Springfield,Massachusetts,U.S.A., https://www.merriam-webster.com/dictionary/grassroots (21.01.2019).

[10] Հայաստանում Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը գործելով երկար ժամանակ աստիճանաբար ինստիտուցիոնալացվեց և ստեղծեց նոր որակի ՀԿ, որն արդեն առավել պրոֆեսիոնալ մակարդակում է տեսնում և կազմակերպում հարցի լուծումը, ինչպես նաև Ամուլսարի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը, որն աճեց և վերածվեց «Էկոլաբ» ՀԿ-ին։

կան փոխելով պրոֆեսիոնալով[11]: Դ.Սմիթը շեշտում է կամավորության հսկայական դերը ՔՆ-ում և նշում, որ այն ոչ ֆորմալ, տեղական և ինքնավար բնույթի, շահույթ չհետապնդող միություն է, որի անդամներն ունեն համընդհանուր «բարձր» գաղափարներ ու նպատակներ[12]: Կամավորության մեխանիզմը նախաձեռնությունների դեպքում կրում է յուրահատուկ բնույթ[13]: Ողջ ակտիվիզմը հիմնականում իրականացնում են նրանց անդամները, այսինքն «ակտիվիստը» և «կամավորը» նույնացվում են[14]: Սմիթի կարծիքով այս գործողությունների ընթացքում մարդիկ սովորում են քաղաքացիական հմտություններ և դառնում ավելի «լավ» քաղաքացիներ (ինչպես քննարկել, կազմակերպվել և ներկայացնել կարծիք): Նա այս գործընթացն անվանում է ***«դեմոկրատիայի դպրոց»***[15]: Ա. Թոքվիլի պնդմամբ ևս նախաձեռնությունները «ժողովրդավարության դպրոցներ» են, որտեղ մարդիկ հանդիպում և տալիս են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուծումներ[16]: Թոքվիլն առաջինն էր, ով դեմոկրատիային հասնելու ճանապարհին նշեց ինքնակազմակերպված նախաձեռնությունների կարևորության մասին[17]: Ըստ նրա, քաղաքացիական միավորումները պետության և հասարակության միջև հավասարակշռության ապահովման բանալին են: Նա ՔՆ-ները տեսավ որպես հակակշիռ, որն օգնում էր պետությանը լինել հաշվետու, իսկ գործողությունների տեսանկյունից՝ առավել արդյունավետ: Շատ հեղինակների մեկնաբանություններում նշվում է ՔՆ-ի ևս մեկ առանձնահատկություն, որ վերջինիս արդյունքը պետք է բերի հանրային օգուտ: Այն զուտ ազատ ժամանակը լցնելու ձև չէ, չվճարվող աշխատանք կամ բարի կամքի դրսևորում ինչ-որ կազմակերպության կամ խմբի համար[18]: **Ուստի, եթե քաղաքացիական նախաձեռնությունը ի շահ հանրության խնդիրների լուծման չլինի, ապա այն կզրկվի իր առաջնային նպատակից:**

Քաղաքացիական նախաձեռնությունները, բացի իրենց առջև դրված կոնկրետ խնդրից, իրականացնում են շատ ավելի ընդարձակ գործառույթներ, օրինակ սոցիալական կապիտալի ամրապնդումը: Այս կոնտեքստում շատ գիտնականներ (Ռ. Փաթմեն[19], Ս. Թոքվիլեր[20], Ֆ. Ֆուկոյամա[21], Զ. Շտիգլից[22]) նշում են ՔՆ-ների միջոցով սոցիալական կապիտալի կառուցման կարևորության մասին: ***ՔՆ-ներում մասնակցության հետևանքով անհատները վստահում են համընդհանուր վստահության ձևեր, որը դիտարկվում է որպես «սոցիալական կապիտալ»:***

[11] Jantulová, Šťovíčková, M. "Analýza procesu profesionalizace v občanském sektoru očima jeho aktérů", Sociální studia (1), 2005. pp.131–146, (p.143).

[12] Smith, D.H., 'The Rest of the Nonprofit sector: Grassroots Associations as the Dark Matter Ignored in Prevailing "Flat Earth" Maps of the Sector'. Nonprofit and Voluntary Sector Quarterly, 1997b, 26 (3): pp.114–131.

[13] Շահույթ չհետապնդող և ոչ պետական շատ կազմակերպությունների գործունեության որոշ դեպքերում հնարավոր է, որ նրանք ունենան վարձատրվող աշխատակիցներ, բայց լինել քաղաքացիական նախաձեռնության կամավոր, նշանակում է կամավորության մի տեսակ, որը չի վարձատրվում և ղեկավարվում է խմբի ևս կամավոր անդամների կողմից:

[14] Smith, D.H., "Grassroots Associations Are Important: Some Theory and a Review of the Impact Literature". Nonprofit and Voluntary Sector Quarterly, 1997a, 26 (3), pp.269–306.

[15] Նույն տեղում՝ էջ 294:

[16] Tocqueville, A., Mansfield, H. C., & Winthrop, D., Democracy in America. Chicago: University of Chicago Press. 2000.

[17] Kaldor, H. M., "Global Civil Society: An Answer to War".Cambridge: Polity Press. 2003, p.19.

[18] Dekker, P., Halman,L., "Voluntering and Values: An Introduction' A Cross-Cultural Perspective". New York: Kluwer Academic/ Plenum Publishers, 2003. pp.1–17.

[19] Փաթմենը ՔՆ-ները ուղիղ կերպով կապեց սոցիալական կապիտալի հետ՝ նշելով, որ սոցիալական կապիտալը ձևավորվում է հենց փոխազդեցության հարաբերություններում: Նա նաև պնդում է, որ երբ քաղաքացիական ներգրավվածության ցանցերը խիտ են, իսկ փոխազդեցությունն ու վստահությունը խթանված, ապա առաջանում է «սոսնձված» սոցիալական կյանք (Putnam, R. D.,"Bowling Alone: The Collapse and Revival of American Community", New York: Simon and Schuster, 2000):

[20] Ս. Թոքվիլերի տեսակետի համաձայն, թեև նախաձեռնությունների տնտեսական ազդեցությունը մարգինալ է, բայց դրանք կարևոր են սոցիալական կապիտալի ձևավորման տեսանկյունից (Toepler, S., "Grassroots Associations Versus Larger Nonprofits: New Evidence from a Community Case Study in Arts and Culture', Nonprofit and Voluntary Sector Quarterly " 32 (2), 2003, pp. 236–251, (p. 238)):

[21] Ֆրենսիս Ֆուկույաման նշում է, որ ՔՆ-ները ծնում և ուժեղացնում են «սոցիալական կապիտալը», որն ամրապնդվում է միմյանց նկատմամբ քաղաքացիների փոխադարձ վստահությամբ, համագործակցությամբ և միմյանց սատարելու պատրաստակամությամբ (Фукуяма, Ф., "Доверие. Социальные добродетели и путь к процветанию", М., 2004):

[22] Զ. Շտիգլիցի պնդմամբ ևս ՔՆ-ը սոցիալական կապիտալի կարևոր բաղադրիչն են, որը մեծ դեր է խաղում նաև ՔՀ-ն զարգացման գործում (Stiglitz, J.,"Towards a new Paradigm for Development: Strategies, Policies, and Processes", Prebisch Lecture, UNCTAD, Geneva October 19, 1998):

Քաղաքացիական նախաձեռնությունների և ՀԿ-ների տարբերությունները: ՔՆ-ները տարբեր են պաշտոնապես գրանցված, մասնագիտացված ՀԿ-ներից մի շարք առանցքային կողմերով, այդ թվում նրանց կառուցվածը և որոշումների ընդունման ձևերը, ռազմավարությունն ու գործողությունների զինանոցը, նրանց կողմից օտարերկրյա ֆինանսավորման մերժումը և դոնորների օգնությանը չապավինելը[23]: Հաջողության հասնելու ճանապարհին նրանք ապավինում են անմիջական գործողությունների և զանգվածային մոբիլիզացիայի ռազմավարություններին, լայնորեն օգտագործում սոցիալական լրատվամիջոցների և այլ տեխնոլոգիական հնարավորություններ կազմակերպման և մոբիլիզացիայի համար: ՔՆ-ների և ՀԿ-ների կառուցվածքային և բովանդակային տարբերությունների մասին խոսել են շատ մասնագետներ, որոնցից են Ֆռեուդենբուրգը և Սթեինսապիրը[24]: Վերջիններս պնդում են, որ քաղաքացիական նախաձեռնություններն ունեն մի շարք բնութագրիչները, որոնք հակասում են ՀԿ-ների առանձնահատկություններին.

քաղաքացիական նախաձեռնություններ՝

- վստահություն մասնակցային ժողովրդավարությանը,
- անվստահություն պրոֆեսիոնալներին և գիտական հետազոտություններին,
- հանրային բարօրության շեշտադրություն, երկարաժամկետ նպատակների իրականացման պահանջ,
- պետական պաշտոնյաների տեսակետի մերժում,

հասարակական կազմակերպություններ՝

- հավատ պրոֆեսիոնալ անձնակազմին և պասիվ մասնակցությանը,
- հակվածություն տեխնոլոգիական լուծումներին,
- պետական պաշտոնյաների դիրքորոշման հաստատում:

Բայց անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այս տարբերությունները չեն նշանակում, թե ՔՆ-ները կապեր չունեն ՀԿ-ների հետ: Նրանք կարող են լրացնել միմյանց25:

Ինչ վերաբերում է մշակութային ժառանգության պահպանության քաղաքացիական նախաձեռնություններին, ապա նրանց հիմնական նպատակը ոչ միայն պահպանության քաղաքականության վրա ազդեցությունն ունենալն է, այլ ժողովրդի վարքագծի ու վերաբերմունքի փոփոխությունը այդ արժեքների նկատմամբ, այնքանով, որ նրանք կարողանան ինքնուրույն հաղթահարել մշակութային ժառանգության պահպանության խնդիրները: Այս նպատակի համար նրանք պետք է կենտրոնացնեն հանրային աջակցությունը, ռեսուրսները և կազմակերպվեն արդյունավետ փոփոխության համար[26]: Մշակութային ժառանգության քաղաքացիական նախաձեռնությունները հասարակության հանդեպ ունեն նաև բարոյական պարտավորություն, և ապահովում են համերաշխության զգացողություն[27]: Սոցիալական շարժման տեսությունը պնդում է, որ այս դեպքում մասնակիցները ընդհանուր հավատով են միմյանց հետ կապված հանուն փոփոխության[28]:

Մշակութային ժառանգության պահպանության գործում քաղաքացիական նախաձեռնությունների անհրաժեշտությունը պայմանավորված են մի քանի պատճառներով: Պատճառներից մեկը 21-րդ դարի մարտահրավերներն են (գլոբալիզացիան, անհանդուրժողականությունը, անտարբերությունը և անհատականացման գործընթացները), որոնք ջընջում են անհատի համայնքին պատկանելու

[23] Սա նաև քաղաքական որոշում է, որի նպատակն է մեծացնել իրենց լեգիտիմությունը հանրության աչքին և խուսափել պնդումներից, թե նրանք «գրանտակերներ» են:

[24] Freudenberg, N., and Steinsapir, C., "Not in Our Backyards: the Grassroots Environmental Movement. In R. E. Dunlap and A. G. Mertig, American Environmentalism: The U.S. Environmental Movement, 1970-1990, Philadelphia, Taylor & Franci: 1992, pp. 27-37.

[25] Օրինակ, ՀԿ-ները կարող էին իրենց փորձը ներկայացնել նախաձեռնության խմբերին, իսկ վերջիններս կարող են ակտիվացնել ՀԿ-ներին: ՀԿ-ներում աշխատող անհատները հաճախ միանում են ՔՆ-ին՝ իրենց ունակություններով աջակցելով վերջիններիս, իսկ որոշ դեպքերում՝ տրամադրում են խորհրդատվություն՝ օգնելով նախաձեռնությունների ազդեցության մեծացմանն ու ընդլայնմանը:

[26] Stern, P. C., Dietz, T., Abel, T., Guagnano, G.A. and Kalof, L., "A Value-Belief-Norm Theory of Support for Social Movements: The Case of Environmentalism." Human Ecology Review 6(2), 1999, pp.81-97.

[27] Jenkins, J. C., "Resource Mobilization Theory and the Study of Social Movements." Annual Review of Sociology 9:1, 1983, pp. 527-553.

[28] Stallings, R. A., "Patterns of Belief In Social Movements: Clarifications from an Analysis of Environmental Groups." The Sociological Quarterly ,14:4, 1973, pp. 465-480.

զգացումը, խզում են կոլեկտիվ ինքնության և անհատի կապը: Եվ այդ բացը լրացնելու համար առանցքային նշանակություն ունի մշակութային ժառանգությունը, քանի որ վերջինս կարող է վերականգնել համայնքի այս զգացումը[29]՝ ստեղծելով համախմբման միջավայր, խթանելով և պաշտպանելով ինքնությունը, ավանդույթները և արժեքները: Բենջամին Բարբերը այս կոնտեքստում նաև ընդգծում է մշակութային ժառանգության գործնական նշանակությունը համայնքի «կառուցման» գործում և շեշտում, որ մշակութային ժառանգությունը կառուցվածքային ազդեցություն ունի համայնքի համար[30]: Միևնույն ժամանակ մշակութային ժառանգությունը նպաստում է համայնքի բարօրությանը և ինքնության զգացողությանը[31], այն նաև «հանրային բարիք» է, որը անհատին ու կոլեկտիվին կարող է ապահովել համայնքին պատկանելու զգացումով: Ուժեղացնելով մարդկանց և շրջակա միջավայրի միջև կապերը, մշակութային ժառանգությունը նպաստում է կայունությանը: Քանի որ ամբողջ աշխարհում մշակութային ժառանգության քաղաքականությունը այլևս ինքնիշխան պետությունների մենաշնորհը չէ և միջազգային շատ կառույցների վերազգային կազմակերպությունները ներգրավված են մշակութային ժառանգության պահպանության քաղաքականության մեջ, ուստի մշակութային ժառանգության պահպանությունը նույնպես պետք է վերազգային մակարդակով լինի: Քաղաքացիական հասարակությունը՝ հանդես գալով քաղաքացիական նախաձեռնությունների տեսքով, կարող է խթանել պետությունից անկախ գործողությունները մշակույթի պահպանության ոլորտում և նպաստել մշակույթի ժողովրդավարացման սկզբունքին:

1990-ական թվականներին, մշակութային ժառանգության սահմանումը[32] վերածվեց ավելի լայն հայեցակարգի: Մշակութային ժառանգությունը ստացավ ավելի ակտիվ դերակատարում տեղական, եվրոպական և ՅՈՒՆԵՍԿՕ-ի մակարդակներում և դարձավ մշակույթի ոլորտում կենտրոնացված քաղաքականություն: Այս նորացված ուշադրությունը տեղական ինքնության հանդեպ աճող գլոբալացման հակառակ կողմն էր:

Միջազգային հանրությունը իր բազմաթիվ կոնֆերանսների, կոնվենցիաների և համաժողովների ժամանակ բազմիցս ընդգծել է համայնքի ներգրավվածության և քաղաքացիական նախաձեռնությունների կարևորությունը մշակութային արժեքների պահպանման գործում. 1996 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի «*Մշակույթի և զարգացման համաշխարհային հանձնաժողովը*» հրապարակեց *«Մեր ստեղծագործական բազմազանությունը»* զեկույցը[33], որը կարևորեց մշակութային ժառանգության ոլորտում **քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը**: Հանձնաժողովը, հաշվի առնելով ժառանգության պահպանության պետական նպատակների և միջոցների միջև անհամապատասխանությունը, առաջարկում է միջազգային ջանքեր գործադրել բոլոր տարիքի կամավորներին բարի կամքի դրսևորման համար և լինել **«Մշակութային ժառանգության կամավորներ»:** Նրանց մշտական առաքելությունը կլինի նպաստել ողջ մարդկության նյութական կամ ոչ նյութական ժառանգության պահպանմանն ու ամրապնդմանը, օգտագործելով ժամանակակից տեխնիկան՝ օգտակար գիտելիքների տարածման, ժառանգության մասին գիտելիքների հարստացման և մշակույթների միջև ավելի խորը փոխըմբռնման և հարգանքի

[29] Rosenstein, C., "How Cultural Heritage Organizations Serve Communities: Priorities, Strengths and Challenges". The Urban Institute, Washington, D.C. , 2006 p.1.

[30] Barber, B. R., Managing Europe's Cultural Heritage: A Democratic Perspective. In Visies op erfgoed in Vlaanderen en Europa. Visions of Heritage in Flanders and Europe. Optiques de gestions du patrimoine en Flandre et en Europe, edited by Joris Capenberghs, Jan Cools, and Patrick De Rynck, Culturele Biografie Vlaanderen vzw, Antwerpen, 2003. pp. 80–84.

[31] United Nations Educational, Scientific and Cultural Organization, International Council on Monuments and Sites International Committee on Risk Preparedness, United Nations Office for Disaster Risk Reduction. Heritage and Resilience: issues and opportunities for reducing disaster risks. Fourth Session of the Global Platform on Disaster Risk Reduction (Geneva, 18- 23 May 2013).

[32] Մշակույթը հասարակության կամ հասարակական խմբի հոգևոր, նյութական, մտավոր և զգացմունքային առանձնահատկությունների համախումբ է և ընդգրկում է արվեստի ու գրականության, կենցաղի, միասին ապրելու ուղիների, հնարավորությունների, արժեքային համակարգերի, ավանդույթների ու հավատալիքների ամբողջությունը և այն ժառանգված է անցյալ սերունդներից, և պահպանվում է ներկա և ապագա սերունդների համար (Universal Declaration on Cultural Diversity adopted by the United Nations Economic, Social and Cultural Organization (UNESCO) in 2002).

[33] UNESCO World Commission on Culture and Development, UNESCO Universal Declaration on Cultural Diversity was adopted by the General Conference of UNESCO (31st Session), Paris, 15 Oct.-3 Nov,2001.

խթանման համար: Հանձնաժողովը այդ «պարտավորությունները» հանձնեց նաև ՄԱԿ-ի կամավորներին (UNV) և առաջարկեց ընդլայնել իրենց շրջանակը՝ ներառելով մշակութային ժառանգությունը:[34] 2001 թ.-ի ապրիլի 5-7-ը Պորտորոզում տեղի ունեցավ «Ժառանգության» համար պատասխանատու նախարարների հինգերորդ եվրոպական կոնֆերանսը[35], որը հայտարարություն ընդունեց մշակութային ժառանգության ոլորտում կամավորական կազմակերպությունների կամ միավորումների դերի մասին (Պորտորոզյան հռչակագիր 2001): Այս հռչակագիրը բանալի դարձավ հաջորդ՝ 2005 թ. հոկտեմբերի 27-ին մշակութային ժառանգության արժեքի մասին շրջանակային կոնվենցիայի (այսպես կոչված Ֆարոյի կոնվենցիա) ընդունման համար: Ֆարոյի կոնվենցիան նոր մեկնաբանություն տվեց «մշակութային ժառանգություն» բաղադրիչին այն վերաձևակերպելով որպես «ժառանգության համայնք»: ***Կոնվենցիան «ժառանգության համայնքը» սահմանում է որպես անցյալից ժառանգված նյութական և ոչ նյութական ռեսուրսների ամբողջություն, որը որոշում է մարդկանց ինքնությունը սեփականությունից անկախ, որպես անընդհատ զարգացող արժեքների, համոզմունքների, գիտելիքների և ավանդույթների արտացոլում և արտահայտում: Այն արտահայտում է այն սկզբունքը, որ պահպանումը ինքնանպատակ չէ, այլ ծառայում է անհատական և կոլեկտիվ բարօրությանը:*** Այն ներառում է շրջակա միջավայրի բոլոր ասպեկտները, որոնք առաջանում են ժամանակի և ժողովրդի փոխազդեցության արդյունքում: ժառանգության համայնքը բաղկացած է այն մարդկանցից, ովքեր գնահատում են մշակութային ժառանգության կոնկրետ ասպեկտները, և հասարակական գործողության միջոցով պահպանում և փոխանցելու ապագա սերունդներին:[36] Կոնվենցիան նաև ճանաչում է մշակութային ժառանգության նկատմամբ անհատական և կոլեկտիվ պատասխանատվությունը և ընդգծում, որ մշակութային ժառանգության պահպանումն ու դրա կայուն օգտագործումը մարդկային զարգացման և կյանքի որակը բարձրացնող գործոններ են: Կոնվենցիան շեշտում է նաև մշակութային ժառանգության դերը ժողովրդավարական հասարակության կառուցման գործում և նշում, որ յուրաքանչյուրը, միայնակ կամ կոլեկտիվ, պարտավոր է հարգել այլոց մշակութային ժառանգությունը, որքան իրենց սեփական ժառանգությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ.-ի հոկտեմբերին ընդունված «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման մասին կոնվենցիան» ևս կարևորում է ոչ նյութական մշակութային ժառանգության «արտադրության», պահպանման, պաշտպանման և գեղագիտական նշանակության համար **համայնքների ունեցած պոտենցիալը**[37]: 2005 թ.-ին ընդունված «Մշակութային արտահայտությունների բազմազանության պահպանման և խթանման մասին կոնվենցիան» ևս վերաբերում է **քաղաքացիական հասարակության կարևորությանը** մշակութային բազմազանության խթանման և պահպանման գործում: Այս մտահոգությունը վերահաստատվել և կարևորվել են նաև 2006 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման համայնքների ներգրավման վերաբերյալ փորձագետների հանդիպման ժամանակ»[38]: Բացի այդ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության օժանդակման 2001-2006 թվակկանների գլխավոր կոնֆերանսին շեշտադրվեց նաև ոչ պետական սեկտորի և քաղաքացիական նախաձեռնությունների ակտիվության կարևորությունը[39]: Իսկ արդեն 2008 թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-յի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժինը ոչ պետական կազմակերպություններին և **քաղաքացիական միավորումներին ՅՈՒՆԵՍԿՈ-յի կարևոր գործընկերներ** համարեց վերջինիս

[34] UNESCO, Convention concerning the protection of the world cultural and natural heritage, World Heritage Committee, Twentieth session,Merida, Yucatan, Mexico,2-7 December 1996, p. 14.

[35] Fifth European Conference of Ministers responsible for the Cultural Heritage, Portoroz˘, Slovenia, 6-7 April 2001.

[36] Council of Europe Framework Convention on the Value of Cultural Heritage for Society, Article 2,Council of Europe Treaty Series - No. 199, Faro, 27.10.2005, https://rm.coe.int/1680083746 (28.03.2019).

[37] UNESCO, Convention for the Safeguarding of Intangible Cultural Heritage, 2003, http://www.unesco.org/culture/ich/index.php?pg=00006 (28.03.2019).

[38] Expert Meeting on community involvement in safeguarding intangible cultural heritage: towards the implementation of the 2003 convention, 13-15 March 2006, Tokyo, Japan REPORT, Published by Intangible Heritage Section Division of Cultural Heritage, Sector for Culture UNESCO, Asia/Pacific Cultural Centre for UNESCO (ACCU), 2006, pp. 6-15.

[39] UNESCO, Sexennial Report of the Executive Board to the General Conference on the Contribution made to UNESCO's activities by NonGovernmental Organisations (2001–2006), 176 EX/46, Paris, 9 March 2007.

ծրագրերի և հիմնական գործառույթների իրականացման գործում: **Այսպիսով, քաղաքացիական հասարակությունը՝ ներառյան մշակութային ժառանգության պահպանության քաղաքացիական նախաձեռնությունները, գործիք դարձան մշակութային ժառանգության խթանման, պահպանման, և պաշտպանության համար:**

Հայաստանի քաղաքացիական ակտիվիզմը 1980-90-ական թվականներին: Մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված ՔՆ-ների առաջացման հիմքերի ուսումնասիրության համար անհրաժեշտ ենք համարում քննության առնել այն հասարակական և քաղաքական իրավիճակը, որի արդյունքում կամ ինչի դեմ պայքարում նրանք ձևավորվեցին: Նրանց առաջացումը սերտորեն կապված է խորհրդային, այնուհետև հետխորհրդային Հայաստանում առկա մի շարք մշակութային և քաղաքական խնդիրների հետ: ՔՆ-ների նախահիմքերը առաջացան դեռևս 1980-ական թվականներին և տարբեր փոփոխությունների ենթարկվեցին հաջորդ տարիների ընթացքում: Այդ ընթացքը բաժանվում է մի քանի փուլերի.

- ✓ 1987-1991թթ.-բնապահպանական քաղաքացիական ակտիվիզմի ձևավորումը Խորհրդային Հայաստանում,
- ✓ 1991-2007թթ.-Հետխորհրդային Հայաստանի հասարակական կազմակերպությունների բուռն աճի, քաղաքացիական հասարակության արհեստական «ստեղծման» կամ «սնուցման» ժամանակաշրջան,
- ✓ 2007-2018թթ.-ոչ ֆորմալ ՔՆ-ների առաջացման և ինքնորոշված քաղաքացիական ինքնագիտակցությամբ «իրական» քաղաքացիական հասարակության[40] ծնունդը Հայաստանում:

1980-ականներին ԽՍՀՄ-ում հայտարարվեց «գլասնոստ» և «վերափոխման» քաղաքականություն, որը նոր հնարավորություններ ստեղծեց ֆորմալ միավորումների ձևավորման համար՝ ակտիվացնելով պետական վերահսկողությունից դուրս գտնվող կազմակերպությունների գոյությունը: Այս փոփոխությունների առավելություններից օգտվեցին նաև Հայաստանում: Սկսեցին հայտնվել առաջին ոչ պետական կազմակերպությունները, որոնք կոչվեցին հասարակական[41]: 1980-ականների կեսին Խորհրդային Հայաստանում սկսեց ի հայտ գալ բնապահպանական ակտիվիզմը[42], որը իշխող վարչակարգի մոտ դիմադրության չհանդիպեց: Վերջինիս պատճառն ըստ Լևոն Աբրահամյանի այն էր, որ խորհրդային իշխանությունները չէին կարծում, թե բնապահպանական շարժումները կարող են մեծ սպառնալիք ներկայացնել իշխող վարչակարգի համար[43]: Բայց պետք է փաստել, որ բնապահպանական շարժումները Հայաստանում հետապնդում էին քաղաքականապես ավելի զգայուն նպատակներ՝ այդ թվում Կոմունիստական կուսակցության վերահսկողության թուլացումը, լայն ազգային իրավունքների, քաղաքական բարեփոխումների և անկախության հասնելը: Արդյունքում ակտիվիզմը փոխակերպվեց մի շարժման, որն ի վերջո անկախության կոչեր էր անում[44]:

Հայաստանի քաղաքացիական ակտիվիզմը 1991-2007 թվականներին: Երբ 1991թ. Հայաստանն անկախացավ, բնապահպանական մտահոգությունները հետին պլան մղվեցին այնպիսի հրատապ հարցերի համեմատ, ինչպիսիք էին 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքներին արձագանքելը (45.000 մարդկային կյանքի կորուստ և 500.000 անօթևան), Ադերբեջանի հետ պատերազմի և շրջափակման ազդեցության հաղթահարումը, Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության և նորանկախ Հայաստանի Հանրապետության տնտեսության անկման խնդիրները, աճող աղքատությունը, փախստականների

[40] Abrahamian, L., Hm. "Civil Society Born in the Square: The Karabagh Movement in Perspective." In The Making of NagornoKarabagh, Springer. 2001. Pp.116–134.

[41] Արևմուտքում դրանք հիմնականում կոչվում են ոչ կառավարական կազմակերպություններ՝ NGO-ներ (non-governmental organisation), որը հայերեն թարգմանվել է հասարակական կազմակերպություն (ՀԿ), և հետազոտողների կարծիքով՝ այդ եզրը կրում է Հայաստանի խորհրդային անցյալի բեռը և նույնացվում է այդ տարիներին հասարակական հիմունքներով գործող կազմակերպությունների և կառույցների հետ:

[42] 1986թ. մարտից մինչև 1988թ. փետրվարը տեղի ունեցան մի շարք ցույցեր Երևանում գտնվող «Նաիրիտ» քիմիական գործարանի և Թուրքիայի սահմանին մոտ գտնվող «Մեծամորի ատոմակայանի» դեմ:

[43] Abrahamian, L., Armenian Identity in a Changing World Costa Mesa, CA: Mazda Publishers, 2006, p. 253.

[44] Henry, L. A., Two Paths to a Greener Future: Environmentalism and Civil Society Development in Russia. Demokratizatsiya , Spring 10, 2002, pp. 184-206 (p. 186).

ներհոսքը և այլն: Եվ փաստորեն, նոր ձևավորված ՀԿ-ների գործունեության սկզբնական ուղղվածությունը թվարկված իրադարձություններին արձագանքելն ու մարդասիրական օգնության ցուցաբերումն էր[45]: Վերջիններս հիմնականում կենտրոնացան ոչ թե քաղաքացիական կամ մշակութային ժառանգության պահպանման, այլ հումանիտար խնդիրների վրա: Բացի դա, 1990-ականների սկզբին Հայաստանի բնապահպանական կազմակերպությունների հեղինակությունն ընկավ հասարակության աչքին և ծնեց անվստահության մթնոլորտ: Ակտիվիստներին այդ ժամանակ մեղադրում էին շրջակա միջավայրին վերաբերող մտահոգությունները տնտեսական զարգացումից վեր դասելու համար[46]: ***Անկախության առաջին մեկուկես տասնամյակի (1991--2007թթ.) ընթացքում Հայաստանում շատ քիչ ակտիվություն է նկատվել մշակութային և բնական ժառանգության պահպանության բնագավառում, իսկ քաղաքացիական գործընթացները ընդհանրապես հետին պլան էին մղված:***

Բայց, հենց այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանում առաջ եկան շարժումներ, որոնց նպատակը սոցիալիստական վարչակարգերի փլուզումից հետո շուկայական տնտեսությանը և ժողովրդավարությանն աջակցելն էր: Այս ամենի թիկունքում կանգնած էին արևմտյան դոնորները, ովքեր ժողովրդավարության էին ցանկանում հասնել քաղաքացիական հասարակության «կառուցման» միջոցով[47]: Վերջինս այս պարագայում դիտարկվում էր և՛ որպես միջոց, և՛ որպես նպատակ: Քաղաքացիական հասարակության կառուցման «գործիքը» դարձան ՀԿ-ները, ինչով էլ պայմանավորվեց նրանց բուռն աճը[48]: Կոմունիզմի փլուզմամբ փաստորեն, ՀԿ-ները դարձան այն շատ նոր իրողություններից, որոնք ժողովրդավարացումն ու «արևմտականացումը» բերեցին Հայաստան և նպաստեցին երրորդ սեկտորի արհեստական «ստեղծմանը»: Միջազգային ՀԿ-ները սկսեցին աշխատել Հայաստանում և դարձան «օրինակ» կազմակերպություններ[49]: Դրանք Հայաստանում իրենց սկզբնավորման առաջին փուլում ստեղծվեցին քաղաքական կամ սոցիալական էլիտայի կողմից[50]: Իսկ մյուս մասն էլ ձևավորվեց ընտանեկան, ազգակցական և դրացիական սկզբունքներով, կամ պետական պաշտոնյաների և քաղաքական կուսակցությունների անմիջական հովանավորությամբ և որևէ կերպ չէին նպաստում հանրության կարիքների վերհանմանը[51]: Կազմակերպություններից շատերը մեծապես կախված էին հիմնադիր կամ «ուժեղ առաջնորդից», ով հաճախ խիստ և խարիզմատիկ անձնավորություն էր և նաև ֆինանսական հարցերի պարագլուխը[52]: Եվ եթե հիմնադիր առաջնորդը դուրս գար, ապա կազմակերպությունը հաճախ փակվում էր[53]: ՀԿ-ները ունեին ֆինանսական կայունության կասկածելի մակարդակներ և ձևավորված չէին իրենց համայնքների իրական խնդիրների վրա[54]: Փաստորեն, 1990-ականներին դոնորները սկսեցին ակտիվորեն աջակցել քաղաքացիական հասարակության ամրապնդմանը՝ առաջնորդվելով այն համոզմամբ, որ քաղաքացիական հասարակության և ժողո-

---

[45] Paturyan Y. , The Armenian third sector twenty years after the post-soviet transition: continuity or change?
American University of Armenia, Yerevanб 2014, p.26.

[46] Բնապահպանները հաշվի չէին առնում գործազրկությունը «Նաիրիտ» քիմիական գործարանը և «Մեծամորի ատոմակայանը» փակելու հետևանքով:

[47] Sampson, S., Beyond Transition: Rethinking Elite Configurations in the Balkans' in C Hann (ed), Postsocialism: Ideals, Ideologies and Practices in Eurasia. London: Routledge. 2002.

[48] Օրինակ՝ 1994 թվականին Հայաստանի արդարադատության նախարարությունում գրանցված էր միայն 44 հասարակական կազմակերպություն: Երկու տարի անց՝ 1996թ. գրանցված ՀԿ-ների թիվը 1500-ից ավելի էր՝ շնորհիվ օտարերկրյա դրամաշնորհների աճող մատչելիության, իսկ մինչև 2010թ. արդեն կար ավելի քան 3300 գրանցված ՀԿ:

[49] Blue, R. N., Payton, D. E. and Kharatyan, L.Z., Armenia NGO Sector Assessment. NGO Strengthening Program. Yerevan: World Learning, Armenia. 2001.

[50] Dudwick, N., "The Mirage of Democracy: A Study of Post-Communist Transitions in Armenia (Project on Democratization and Political Participation in Post-Communist Societies", United States Department of State Bureau of Intelligence and Research, 1995.

51 Погосян Г. А., " Современное Армянское общество: Особенности трансформации", М., 2005, с. 223.

[52] Danielyan, E., "Armenia. In Nations in Transit: Civil Society, Democracy and Market in East Central Europe and Newly Independent States, edited by Adrian Karatnycky, Alexander Motyl, and Amanda Schnetzer",New York: Freedom House. 2001.

[53] Blue, R.N., and Ghazaryan, Y. G.,"Armenia NGO Sector Assessment: A Comparative Study. NGO Strengthening Program", Yerevan, Armenia: World Learning for International Development. 2004.

[54] Greenberg, J., There's Nothing Anyone Can Do About It: Participation, Apathy and 'Successful' Democratic Transition in Postsocialist Serbia. Slavic Review, VL 69, 2010, pp. 41-64.

վրդավարության կապը բնական է և անխուսափելի[55]: Այս ամենին հասնելու հասնելու համար մեծ ծավալի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ ներդրվեցին[56]: ՀԿ-ները սովորաբար կենտրոնացած էին կոնկրետ օրակարգի վրա: Նրանք թերագնահատում էին ֆունդամենտալ խնդիրների բարձրաձայնման կարևորությունը և շեշտադրում կատարում ինչ-որ կոնկրետ խնդիրների վրա: Այս տեսանկյունից Ա. Իշխանյանը պնդում է, որ թեև ՀԿ-ների ինստիտուցիոնալ զարգացումը տեսանելի էր Հայաստանում, այնուամենայնիվ երրորդ սեկտորի զարգացումը չի կարելի բնութագրել որպես հաջողակ[57]: ***Այսպիսով, չնայած անկախությունից հետո «սնուցված» հարյուրավոր ՀԿ-ների, նրանց կարողությունը պատասխանելու հանրության կարիքներին և ընդհանրապես նրանց կայունությունը հարցականի տակ էր:[58] Չնայած քաղաքացիական հասարակության (ՔՀ) ինստիտուտիոնալ զարգացմանը և ժողովրդավարության «կառուցման» ձգտումներին, մարդկային և ֆինանսական ռեսուրսների զգալի ներդրմանը արևմտյան դոնորներից[59], իրական ժողովրդավարությունն ու քաղաքացիական հասարակությունը 1991-2007 թվականներին Հայաստանում չծնվեց, և շատ մասնագետներ նշեցին Սովետական կառավարման համակարգի ձախողման մասին[60]: ՀԿ-ների մշակույթը ընկալվեց որպես դեմոկրատիայի արհեստական ստեղծում, այլ ոչ թե քաղաքացիական հասարակության իրական զարգացում:***

Մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված նոր քաղաքացիական մշակույթի ձևավորումը Հայաստանում 2008-2018 թվականներին: 21-րդ դարի սկզբին ՀԿ-ները սկսեցին իրենց ուշադրությունը տեղափոխել մարդասիրական օգնությունից դեպի հասարակական և համայնքային խնդիրներին: ՈՒ թեև վերջիններս շարունակում էին մնալ քաղաքացիական հասարակության կարևորագույն բաղադրիչներից մեկը, այնուամենայնիվ, նրանք միակը չէին կառավարություն, տնտեսություն և մասնավոր սեկտոր համակարգում[61]: Հայաստանի քաղաքացիական հասարակությունը ոչ միայն ՀԿ-ներն էին, այլ նաև նոր զարգացումներից առաջացած ***ՔՆ-ները:*** Մակութային ժառանգության պահպանությանն ուղղված ՔՆ-ում[62] ներգրավված ակտիվիստները, հիասթափված լինելով կուսակցական, քաղաքական և սոցիալական անարդարությունից, այնպես էլ ֆորմալ ՀԿ-ների իրավակառուցողական մոդելից, ներկայացնում են քաղաքացիական հասարակության և քաղաքացիական ակտիվության նոր մոդել[63]:

---

[55] Howell, J., and Pearce, J., " Civil Society and Development. A Critical Interrogation. Boulder", CO: Lynne Rienner, 2002, p. 51.

[56] Շատ մտածողներ շեշտադրեցին քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ամուր կապը, ինչպիսիք էին Արենդթը (Arendt, H., "The Human Condition", Chicago & London: The University of Chicago Press, 1958) և Ֆրեզերը (Fraser, N., "Rethinking the public sphere: A contribution to the critique of actually existing democracy", 1990, Social Text, no. 25/26, 1990, pp. 56–80), ովքեր կարծում են, որ ՔՀ-ը ամրապնդող կենսական դեր ունի ժողովրդավարության գործում, մեկնաբանելով վերջինս որպես մի տիրույթ, որը ստեղծվում է ՔՀ-ն կողմից և միջնորդ է պետական և մասնավոր համակարգերի միջև: Իսկ երբ քաղաքացիական հասարակությունը զարգացում էր հատուկ ամերիկյան կամ արևմտյան օգնությամբ, համարվում էր «ժողովրդավարության օգնության ինդուստրիա» (Rueschemeyer, D., Stephens, E., and Stephens, J., (eds), "Capitalist Devleopment and Democracy", 1992, Chicago, IL: University of Chicago Press. p. 6) կամ վերջինիս «ոլորտ» (Encarnacion, O., "Beyond Civil Society: Promoting Democracy after September 11", Orbis 47(4): 2003, pp. 705–720. (p. 709)).

[57] Ishkanian, A., "Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia". London and New York: Routledge. 2008.

[58] Քաղաքացիական հասարակության CIVICUS ինդեքսը գնահատել է Հայաստանի քաղաքացիական հասարակությունը՝ որպես «չափավոր զարգացած» կազմակերպվածության համեմատաբար ուժեղ մակարդակով, սակայն հասարակության վրա ունեցած թույլ ազդեցությամբ և ցածր քաղաքացիական ներգրավմամբ (Hakobyan, L., Tadevosyan M., Sardar A. and Stepanyan A., Armenian Civil Society: From Transition to Consolidation. Analytical Country Report. CIVICUS Civil Society Index. Yerevan, Armenia: Counterpart International. 2010, http://program.counterpart.org/Armenia/?page_id=48 (28.03.2019)), Իսկ Կովկասի ռեսուրսների հետազոտության ինստիտուտը նշել է, որ շատ թույլ է նաև հասարակության վստահությունը (Caucasus research resource center. Caucasus Barometer. Yerevan: CRRC, 2010).

[59] Carothers, T., " Aiding Democracy Abroad: The Learning Curve", Washington, DC, Carnegie Endowment for International Peace. 1999.

[60] Mandel, R., Introduction: Transition to Where? Developing Post-Soviet Space.. Slavic Review, 71, 2012, pp.223-233.

[61] Linz, J. and Stepan, A., "Toward Consolidated Democracies." In Consolidating the Third Wave Democracies: Themes and Perspectives, edited by Larry Diamond, Baltimore and London: Johns Hopkins Univ. Press, 1997, pp. 14– 33.

[62] Թռչկանի ջրվեժի, Ամուլսարի, Գառնիի հեթանոսական տաճարի, Մաշտոցի պուրակի, Քարահունջի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություններ:

[63] Ishkanian, A.,. "Self-Determined Citizens? New Forms of Civic Activism and Citizenship in Armenia." Europe Asia Studies 67 (8), 2015, pp.1203–1227.

Ներկայիս հայաստանյան քաղաքացիական հասարակության երկու հատվածների՝ հին ֆորմալի և նոր ոչ-ֆորմալի միջև առկա է միարժամանակ համագործակցություն և լարվածություն: «Նոր երրորդ դասի» շարժումները՝ ՔՆ-ները, ցույց են տալիս համեմատաբար ակտիվ կարողություն համայնքի հետ կապեր հաստատելու և իրական քաղաքացիական մասնակցություն ցույց տալու գործում: Այս իմաստով տարբեր է նաև «հին և նոր» երրորդ սեկտորի գործողությունների միջև գոյություն ունեցող սկզբունքները, ինչպիսիք են ժամանակակից կապի գործիքները, կազմակերպչական կառուցվածքը և դրամահավաքի միջոցները:[64]

Ձևավորվելով 2007 թ.-ին՝ 11 տարվա ընթացքում նրանք գրանցել են մի շարք հաղթանակներ կառավարական անբարենպաստ որոշումների դեմ հասարակության մտահոգությունները բարձրացնելու ճանապարհով: Նրանք դարձան քաղաքացիական հասարակության իրական շարժիչ ուժը և ընդգրկեցին մի շարք ոլորտներ. մարդկանց իրավունքների պաշտպանության, կրթության և աշխատանքային, համայքի զարգացման, շրջակա միջավայրի պահպանության, բնական և մշակութային ժառանգության պահպանության ուղղված խնդիրներ: Ներկայումս նրանք Հայաստանի քաղաքացիական հասարակության կարևոր, ուշադրության խիստ արժանի ոլորտ են համարվում:

2010 թվականից ի վեր ՔՆ-ի աճը և ծավալումը պարտական է մի քանի գործոնի.

Առաջին գործոնը կապված էր մշակութային ժառանգության պետական պահպանության քաղաքականությանից հրաժարման և ՔՆ-ների մասնակիցների ***տարիքային առանձնահատկությունների հետ***: Անկախացած Հայաստանը՝ սկսած 1991 թվականից, որդեգրեց Խորհրդային միության վարած մշակութային քաղաքականությունը և հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանության միակ երաշխավորը շարունակեց մնալ Հայաստանի երրորդ Հանրապետությունը: Շրջակա միջավայրի, պատմության ու մշակույթի հուշարձանների և մշակութային այլ արժեքների պահպանությունը ՀՀ Սահմանադրությունը հռչակեց որպես պետության պարտավորություն[65]. *«Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության եւ պաշտպանության ներքո»:* Սահմանադրական այս նորմից բխում են նաև բնագավառին վերաբերող մյուս բոլոր օրենքներն ու իրավական ակտերը և կրում վերջինիս ազդեցությունը: Պետական լիազորված մարմինը Մշակույթի նախարարությունն է որը համաձայն կառավարության կողմից հաստատված կանոնադրության՝[66], նպատակ ունի. «մշակութային ժառանգության ստեղծմանը, պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահռչակմանն ու ծառայությունների մատուցմանը նպաստել»: Այն իր առջև դրված խնդիրների իրականացման համար՝ մշակում է Հայաստանի Հանրապետության պատմամշակութային ժառանգության հաշվառման, պահպանության, օգտագործման ու համալրման սկզբունքները, կանոնները, չափանիշները (նորմատիվներ) եւ չափորոշիչները: Ինչպես նաև, ըստ 5-րդ կետի հաստատում է հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը և սահմանում դրանց պահպանության ռեժիմը: Ինչպես տեսնում ենք, ՀՀ մշակույթի նախարարությունը մշակույթի պահպանության բոլոր գործառույթները վերցնում է իր վրա և հասարակությունը չունի օրենսդրական երաշխիքներ պահպանության ծրագրերին գործնական մասնակցության համար:

Բայց սկսած 2010 թվականից, նոր սերնդի առկայությունը, նոր մտածողությունը ժառանգության հասարակական պահպանության վերաբերյալ այլևս թույլ չէին տալիս հասարակությանը լինել պասիվ դիտորդի դերում:

[64] Paturyan, Y., Gevorgyan, V., "The Armenian third sector twenty years after the post-soviet transition: continuity or change?",American University of Armenia, Assistant Director of Turpanjian Center for Policy Analysis, 2005, pp.1-20.

[65] ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդված. «Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետությայն հոգածության և պաշտպանության ներքո»: (Ընդունվել է 1995թ. հուլիսի 5-Ի ՀՀ հանրաքվեով, փոփոխությունները՝ 2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ հանրաքվեով):

[66] ՀՀ կառավարության որոշումը ՀՀ մշակույթի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ու օգտագործման բնագավառներում կառավարումն իրականացնող լիազորված մարմնի իրավասություններ վերապահելու եվ ՀՀ կառավարության 1998 թվականի ապրիլի 6-ի N 229 ու 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1112 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին, N 1549-Ն, ընդունված 27.11.2003թ.:

Լռության մշակույթը, որը խորհրդանշական էր ԽՍՀՄ և նորանկախ մշակութային քաղաքականությանը, այլևս խորթ է իրենց համար: Ուստի քաղաքացիական նախաձեռնությունների ակտիվ միջուկը՝ հայաստանցիների առաջին այն սերունդը, որը չի ապրել խորհրդային շրջանում, ունի ոչ միայն տարբերվող աշխարհայացք, այլ մշակութային արժեքների պահպանության գործընթացում հրաժարվում է պահպանության պետական ընկալումից և որդեգրում ավելի գործուն մոտեցում պահպանության գործընթացներին: Նրանք ձգտում են դառնալ օրիկանության «կառուցողներ» ուղիղ և կոնկրետ քաղաքացիական գործողությունների ճանապարհով (փողոցային ցույցեր, մշակութային տարածքների «գրավումներ», ֆլեշ-մոբեր, մշակութային տարածքը «հանրայինի» վերածելու գործուն քաղաքականության կիրառում, այդ թվում դեբատներ, համերգներ[67], թատերական ներկայացումներ և այլն): Այս ամենի շնորհիվ կարող ենք փաստել, որ Հայաստանի քաղաքացիական հասարակությունը այժմ այն չէ, ինչ երեք տասնամյակ առաջ էր[68]: Նոր սերունդը այլևս սոցիալիզացված չէ Սովետական միության «պարտադիր կամավորության»[69] ինստիտուտով: Մեծանալով այլ հասարակական պայմաններում, նրանք կարողացան փախչել Սովետական միավորումների հանդեպ ունեցած անվստահությունից և կարծես թե կարողացան հաղթահարել հետխորհրդային կոմունիստական և Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության պետական սինդրոմից:

Երկրորդ՝ մշակույթի պահպանության հասարակական ընկալման աճ: Մշակութային ժառանգության պահպանության ՔՆ-ների առաջացումը և ինստիտուցիոնալ զարգացումը կապվում է մշակույթի պահպանության միջազգային կառույցների այն քաղաքականության հետ, որ մշակույթը այլևս պետության մենաշնորհը չէ և այն տրված է հասարակությանը՝ պահպանության ծրագրերի արդյունավետ իրականացման համար: Միջազգային հանրությունը՝ սկսած 90-ականներից իր ուշադրությունը սևեռել է մշակութային ժառանգության ոչ պետական, այլընտրանքային պահպանությանը: Այն իր բազմաթիվ կոնվենցիաներով շեշտադրում է մասնակցության և կամավորության հսկայական ներուժը պահպանության ծրագրերին՝ ընդհուպ մինչև մշակութային ժառանգության կոնցեպտը վերաձևակերպելով որպես «համայնքի ժառանգություն»:

Երրորդ գործոնը կապված է Հայաստանում առկա խորը ***սոցիալական և տնտեսական խնդիրների հետ:*** ՄԺ պահպանությանն ուղղված քաղաքացիական ակտիվիզմը փաստորեն ծնվեց Հայաստանի քաղաքական մշակույթի դեմ պայքարում, որը տառապում էր հանրային տարածքի կամ քաղաքացիական հասարակության նկատմամբ ունեցած անտարբերության իրականությունից: Բայց պետք է փաստել, որ խնդիրը ոչ միայն խորհրդային անցյալն էր, այլ նաև կառավարման ավտորիտար[70], օլիգարխիկ համակարգը և

[67] «Արամի 23» հասցեում գտնվող պատմամշակութային ժառանգության պահպանության նախաձեռնության ակտիվիստները՝ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգախումբը օրեր շարունակ բացօթյա համերգներ էր կազմակերպում ապօրինի շինարարության հետևանքով խարխլված շենքի դիմաց և պահանջում պահպանել այն իր նույն տեսքով: Ինչպես նաև մեկ այլ, Աֆրիկյանների տան պաշտպանության ջատագով, աշխարհահռչակ դաշնակահար Տիգրան Համասյանը համերգ կազմակերպեց, ի պաշտպանություն Աֆրիկյանների տան: Իսկ աշխարհահռչակ երգիչ Սերժ Թանկյանը Թեղուտի պաշտպանության ՔՆ-ն պաշտպանության համար միջազգային մի քանի համերգներ ունեցավ:

[68] Սովետական միության կառավարման համակարգում երրորդ սեկտորի դերակատարումը նվազեցված էր, իսկ պետության, քաղաքացու և տնտեսության միջև կապը ամուր չէր: Ռեժիմի բնույթն այնպիսին էր, որ պետությունն էր կառավարում հանրության սոցիալական կյանքը, երբեմն նաև մարդկանց անհատական կյանքը: Ուստի հետխորհրդային երկրներում քաղաքացիական հասարակության «անկարողությունը», այսինքն անդամակցության, վստահության և կամավորության ցածր մակարդակը, անխուսափելիորեն կապված է նախկինում այդ երկրների ունեցած կոմունիստական փորձի հետ (Howard, M., "The Weakness of Civil Society in Post-Communist Europe . Cambridge, UK: Cambridge University Press. Inglehart, 2003):

[69] Խորհրդային Միությունում գոյություն ուներ պաշտոնապես վերահսկվող և կազմակերպված ասոցիացիաների բազմազանություն, որտեղ մարդկանց մասնակցությունը խրախուսվում էր, իսկ երբեմն էլ հարկադիր էր: Անդամության առումով ևս, Հայաստանի քաղաքացիական հասարակությունը մեծապես տառապում է հետկոմունիստական ֆորմալ հասարակական կյանքի անտարբերությունից և հետկոմունիստական «թուլությունից»:

[70] Ինչպես նշում է Թ. Կարոլը, պետություններում քաղաքացիական մասնակցության բացակայության հիմնա-

կոռուպցիայի հսկայական չափերը[71]: Հետխորհրդային շրջանում Հայաստանի օլիգարխների աճը և դրանց մոնոպոլիզացիան տնտեսական լուրջ խնդիրներ էին ստեղծել հասարակության համար: Տնտեսությունը ուղեկցվում էր աղքատության, բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման և անհավասարության աճող մակարդակներով[72]: Հայաստանի բնակչության 29 տոկոսը աղքատ էր[73]: Միակ ոլորտը, որն ի վիճակի էր տանել երկիրը զարգացման և նպաստել մշակութային ժառանգության պահպանությանը, քաղաքացիականն էր, քանզի մյուս ոլորտները թաթախված էին կուսակցական և կողմնակալ գործունեության մեջ: Հենց այսպիսի սոցիալ-տնտեսական և քաղաքական կոնտեքստում են ձևավորվում ՔՆ-ները, որոնք բացի նախաձեռնության կոնկրետ նպատակից, քննադատում և փորձում են վերափոխել նշված իրականությունը: Նախաձեռնությունները կարծես թե առիթ են դառնում կուտակված դժգոհությունն ու բողոքը արտահայտելու և համայնքի ձայնը լսելի դարձնելու համար: Այս ամենից պետք է եզրակացնել, որ Հայաստանի դեպքում ՔՆ-ների նպատակները, անգամ մեծ ցանկության դեպքում, չէին կարող չընդգրկել քաղաքական և սոցիալական ոլորտները:

Չորրորդ՝ սոցիալական մեդիայի, գործոնը: Հայաստանում սոցիալական ցանցերը քաղաքացիական ակտիվության կարևոր շարժիչ ուժ են: Ներքևից ձևավորված ՔՆ-ը մեծ չափով օգտագործում են սոցիալական մեդիան իրենց գործողություններում՝ հասնելով ջանքերի համատեղման և զուգակցման թե՛ վիրտուալ, թե՛ ֆիզիկական տիրույթներում[74]: Տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ Ֆեյսբուքի և Յուրյուբի մուտքը և տարածումը Հայաստանում նախաձեռնությունների համար ավելի մեծ հասանելիություն և ֆինանսական առումով մատչելիություն են ապահովում: Վերջինիս շնորհիվ ակտիվիստները շատ ավելի արդյունավետ և արագ կազմակերպման և մոբիլիզացման հնարավորություն ձեռք բերեցին[75]: Սոցիալական մեդիան ցույց տվեց երևակայական «հանրային տարածքի» մոդել, որտեղ ամեն մարդ ունի գաղափարներ փոխանակելու և քննարկելու հնարավորություն, կարողունակ է առաջընթաց ապահովել, շարժել հանրային քաղաքականությունը տարբեր խնդիրների վերաբերյալ[76]: Այստեղ ներկայացվող հանրության բողոքները կարող են ռացիոնալ ուժ ունենալ և ճնշել իշխանության տարբեր մտադրություններ, որոնք այս կամ այն կերպ խոչնդոտում են մշակութային ժառանգության պահպանությանը[77]:

կան պատճառը ավտորիտար համակարգերի երկարատև գոյությունն է (Carroll, T. F., “Intermediary NGOs: The Supporting Link in Grassroots Development”. Kumarian Press. 1992)։Սոցիալական կապիտալն այս տիպի երկրներում սովորաբար սահմանափակվում է ընտանեկան և ազգակցական հարաբերությունների շրջանակով (Abom, B., “Social Capital, NGOs, and Development: A Guatemalan Case Study.” Development in Practice, 14 (3), 2004, pp. 342–353.) Ավտորիտար կառավարման համակարգը ոչ միայն չի նպաստում ժառանգության հասարակական պահպանությանը, այլև սպառնալիք է ուղղված ցանկացած երկրի զարգացման դեմ (Paturyan, Y., Gevorgyan, V. and Matevosyan, M., “Is ‘Googling’ a Technique? What the Internet Can Tell Us about the Non-Governmental Sector in Armenia.” Haigazian Armenological Review 34 (July): 2014, pp.257–267)։

71 Թրանսփարենսի Ինթերնեյշնլ ընկերությունը Հայաստանում կոռուպցիոն իրականությանը հետևյալ բնութագրումն է տվել. «Կոռուպցիան Հայաստանում էնդեմիկ և տարածված է, ներթափանցված հասարակության բոլոր մակարդակներում՝ պետական կառավարման, դատական համակարգի, ոստիկանության և առողջապահության ոլորտներում (Transparency International. 2014. Overview of Corruption and AntiCorruption in Armenia, առցանց հասանելի է http://www.transparency. org/whatwedo/answer/overview_of_corruption_and_anti_corruption_in_armenia (15.01.2019):

72 Griffin, K., Kelly, T. & Mckinley, T., “Growth, Inequality and Poverty in Armenia”: A Report Commissioned by the Poverty Group, Bureau for Development Policy, United Nations Development Programme. New York: UNDP. 2002.

73 National Statistical Service of Armenia, Social Snapshot and poverty in Armenia, 2012, **https://www.armstat.am/en/?nid=81&id=1397** (27.02.2019).

74 Այժմ «Մենք ենք այս քաղաքի տերը» ՔՆ-ը ընտրում է «գործողությունների» վիրտուալ հարթակը՝ ֆեյսբուքում ներկայացնելով Երևան քաղաքի պատմամշակութային այն վտանգված հուշարձանների, պաշտպանության անհրաժեշտությունը, որոնք պատկան մարմինների ապօրինի թույլտվությունների պատճառով քանդվում, շինարարական աշխատանքներով խաթարվում և կամ էլ անտեսվում են:

75 Castells, M., Networks of Outrage and Hope: Social Movements in the Internet Age, Cambridge, Polity. 2012.

76 Fuchs, Ch., “Social Media and the Public Sphere”, 2014, pp. 57-101.

77 ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի հայտարարությամբ որոշվել էր Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում սրճարան կառուցել: Բայց հանրության ճնշման տակ նախարարությունը հետ կանգնեց այդ որոշումից: Հաջորդ նախարար Լիլիթ Մակունցի պաշտոնավարման ընթացքում, նախարարությունը մտադիր էր անվանափոխել Զվարթնոցի օդանավակայանը լեգենդար շանսոնյեի՝ Շառլ Ազնավուրի անունով, բայց սոցիալական

Հինգերորդ՝ ժողովրդավարության գլոբալ խնդիրներ: ՔՆ-ների առաջացումը կապվում է մշակութային արժեքների պահպանության և ժողովրդավարության գլոբալ խնդիրների հետ, որոնք մեծ արձագանք են գտել ամբողջ աշխարհում:[78] 2011 թվականին հանուն ժողովրդավարության շարժումների հետ, տեղի էր ունենում նաև քաղաքացիական ակտիվության աճ նախկին խորհրդային երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, Մոլդովայում, Ռուսաստանում, Վրաստանում և Ուկրաինայում[79]: Եվ ՔՆ-ը որոշակի նմանություններ ունեն ամբողջ աշխարհում տեղի ունեցող շարժումների հետ, որոնք առաջ են քաշում սոցիալական արդարության, մշակութային և սոցիալական կապիտալի պահպանման վիճակին վերաբերող մտահոգություններ[80]: Թեև խստացումների հարցն ինքնին Հայաստանի ՔՆ-ների կողմից չի բարձրացվում, այդուհանդերձ, այդ նախաձեռնությունների շարժիչ ուժը ցանկությունն է՝ առաջ քաշելու ժողովրդավարության պակասի, տիրապետող կոռուպցիայի, օլիգարխիկ կառավարման համակարգի, ինչպես նաև որոշումների ընդունման մեջ հաշվետվողականության և թափանցիկության բացակայության հարցերը[81]:

Վեցերորդ՝ մշակութային ժառանգության տնտեսական և սոցիալական բաղադրիչի ակտիվացում: Թե՛ միջազգային և թե՛ տեղական մակարդակում ակտիվացավ այն ընկալումը, որ մշակութային ժառանգությունը լոկ թանգարանային արժեք կամ գեղագիտական հաճույքի միջոց չէ: Այն ունի շատ ավելի լայն գործառույթներ, քան կարելի է առաջին հայացքից ենթադրել. խոսքը գնում է մշակութային ժառանգության տնտեսական և սոցիալական գործառույթների մասին: Մշակութային ժառանգության տնտեսական գործառույթի բացատրությունը կայանում է նրանում, որ երբ համայնքները պահպանում և զարգացնում են իրենց մշակութային արժեքները, նրանք ստեղծում են նոր տնտեսական հնարավորություններ ժառանգության ներուժը օգտագործելու, վերջինիս զարգացմամբ եկամուտներ ստեղծելու համար՝ ապահովելով հիմքեր ինչպես համայնքի զարգացման, այնպես էլ զբաղվածության, զբոսաշրջության, միկրոտնտեսության և մասնավոր ներդրումների համար: Եվ այդ ճանապարհը կարող է դառնալ աղքատության հաղթահարման առաջնային ուղենիշ: Քանի որ մշակութային ժառանգությունը հանրային բարիք է, ապա տնտեսությունը ևս կձախողվի, եթե չօգնի լսելի դարձնել ժառանգության ձայնը: Իլձյուկը պնդում է, որ մշակույթային ժառանգությունը անհրաժեշտություն է քաղաքացիական հասարակության դաշտում, քանի որ թե՛ պետությունը և թե՛ տնտեսությունը կձախողվեն, եթե վտանգված լինի հանրային օգուտը:[82] Իսկ մշակույթի սոցիալական գործառույթը կայանում է նրանում, որ տնտեսական բաղադրիչի ազդեցությամբ մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված ներդրումները կարող են մեծացնել համայնքի ինքնութենական պատկանելիության զգացումը, բարձրացնել փոխադարձ վստահությունը և սոցիալական համախմբման և հզորացման գործընթացում լինել ակտիվ գործոններ: Ահա այս գիտակցումը աստիճանաբար հանգեցրեց հասարակության

ցանցերում հանրության ակտիվ ճնշումները ստիպեցին նախարարին փոխելու իր մտադրությունը:

[78] 2011 թվականը ամբողջ աշխարհում քաղաքացիական անհնազանդության, բողոքների և շարժումների գագաթնակետն էր, որոնք մղվում էին հանուն ժողովրդավարության և ընդդեմ խստացումների (austerity), ինչպես, օրինակ, «Occupy Wall Street»-ը, «Indignados»-ը Իսպանիայում,Արաբական գարունը այլն (Glasius, M. & Pleyers, G., "The Global Moment of 2011: Democracy, Social Justice and Dignity. Development and Change 44, 2013, pp.547-567):

[79] Ishkanian, A., "Engineered Civil Society: the impact of 20 years of democracy promotion on civil society development in the former Soviet countries", 2014, pp.150-170.

[80] Kaldor, M. & Selchow, S. , The 'Bubbling Up' of Subterranean Politics in Europe. Civil Society and Human Security Research Unit, London School of Econoimcs. 2012, http://eprints.lse.ac.uk/44873/1/The%20%E2%80%98bubbling%20up%E2%80%99%20of%20subterranean%20politics%20in%20Europe(lsero).pdf (28.03.2019).

[81] Այս նպատակներին հետամուտ՝ «Փրկենք Մաշտոցի պուրակը» նախաձեռնության ակտիվիստները կազմակերպեցին «քաղաքացիական արդար և անկախ դատարան», որում նրանք քննության առան կրպակների կառուցման օրինականությունը (Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ, 2013թ.): Իսկ Քարահունջի պահպանության քաղաքացիական նախաձեռնությունը բացի մշակութային արժեքի նկատմամբ հոգածություն և պահպանության հստակ ծրագրից, բարձրացնում են նաև քաղաքական, արդարության, ինչպես նաև ազգային հարցեր, որոնք այս դեպքում ուղղված են Նոր Հայաստանի մշակույթի պարագլուխներին, անգամ իրենց պահանջների տեքստում ունենալով փոխնախարարի հրաժարականի պահանջը:

[82] Ilczuk, D., "Cultural Citizenship. Civil Society and Cultural Policy in Europe". Boekmanstudies, Amsterdam, 2001, pp. 20–21.

վերաբերմունքի փոփոխությանը ՄԺպահպանության գործում:

Մշակութային ժառանգության պահպանության քաղաքացիական նախաձեռնությունների ընթացքը Հայաստանում: 2010 թվականից մշակութային ժառանգության պահպանության ակտիվիզմը աճեց և ներկայացրեց քաղաքացիական այնպիսի մշակույթ, որը պատրաստ է հանրային քննարկումների և դեբատների: Թեև այս տարիների ակտիվության ոչ բոլոր[83] դրսևորումներն են ուղղված մշակութային ժառանգության պահպանությանը, բայց շատ խորհրդանշական հաղթանակներ հող նախապատրաստեցին[84] առավել ընդգրկուն նախաձեռնությունների համար և ընդլայնեցին վերջինիս սահմանները մայրաքաղաքից դեպի մարզեր:

Մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված ՔՆ-ները վերջին 11 տարիների ընթացքում ունեցել են ինչպես հաջողված[85], այնպես էլ բռնության, անարդարության և անտարբերության դրսևորումներով հագեցած դեպքեր, որոնց ընթացքում ճնշվել է քաղաքացիական կամքը և նախաձեռնությունը հարկադրաբար դադարեցվել է պետական համակարգի կողմից[86]: Կան մի շարք նախաձեռնություններ, որոնք դեռևս պայքարի փուլում են[87]:

Մշակութային ժառանգության պահպանության քաղաքացիական նախաձեռնությունների արդյունքի գնահատման գծապատկեր: Գծապատկեր 1.



Ինչպես երևում է գծապատկեր 1.-ից մշակութային ժառանգության պահպանության քաղաքացիական նախաձեռնույթուններից ընդամենը 28 % է հանգուցալուծվել դրականորեն, իսկ մնացած մասը կամ կասեցվել է, կամ դեռ ընթացքի մեջ է:

Մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունների տարածքային գծապատկեր: Գծապատկեր 2.



---

[83] «100 դրամի ակցիան» (2013 թվական օգոստոսին), և «Դեմ եմ պարտադիր կուտակայինին» (2013 հոկտեմբերից մինչ-2014 մարտ):

[84] Գրամշիի կարծիքով ՔՆ-ների ազդեցությունը ինչքան էլ ակնառու չլինի, այնուամենայնիվ նրանք հասարակության մեջ «դանդաղ մոլեկուլային»՝ բայց կայուն փոփոխություններ են իրականացնում, որոնք հանգեցնում են հասարակական ավելի լայն տեղաշարժերի (Bobbio, N.,"Gramsci and the Concept of Civil Society". In: KEANE, J. (ed.) Civil Society and the State: New European Perspectives. London: Verso, 1988, pp. 82-92, (p.87)):

[85] «Փրկենք վիշապների պուրակը» (2010թ.՝ նոյեմբեր, Երևան), «Մաշտոցի պուրակ» (2012թ.՝ փետրվար, Երևան) ,«Պահպանենք Թռչկանի ջրվեժը» (2011թ.՝ սեպտեմբեր, Երևան), «Գնում ենք Գառնու կաֆեի ավազը դատարկենք» (2014թ.,Գառնի),«ԱՕԿՍ-ը մերն է»(2017թ Երևան),«Մեր քաղաքը, Պրոֆեսորների շենք» (2018թ.՝ մայիս,, Երևան), «Օպերայում սրճարան չի կառուցվի»(2016թ հեկտեմբեր, Երևան), «Զվարթնոցը չի անվանափոխվի» (2018թ՝ հունիս, Երևան)

[86] «SOS Հրազդան» (2011՝թ. նոյեմբեր, Երևան- Հրազդան), «Խոսրովի արգելոց» (2012թ.՝ հոկտեմբեր, Երևան), «Փրկենք ուսանողական այգին» (2010թ.՝ ապրիլ, Երևան) , «Փրկենք Ղուկաս Չուբարյանի տունը ոչնչացումից» (2011թ.՝ օգոստոս, Երևան), «Կանաչ Կապան», «Մենք դեմ ենք ուրանի բաց հանքի շահագործմանը» (2012թ.՝ փետրվար, Կապան), «SOS! Փրկենք Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճը» (2010 թ.՝ մարտ, Երևան), «Դեմ ենք ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի տան ոչնչացմանը» (2011թ.՝հոկտեմբեր, Երևան), «Արամի խաչմերուկ» (2011թ.՝ նոյեմբեր, Երևան), «Պահանջում ենք վերադարձնել Մինաս Ավետիսյանի որմնանկարները» (2011թ. հունիս, Գյումրի), «Փրկենք Ղուկաս Չուբարյանի տունը ոչնչացումից» (2011թ.՝ օգոստոս, Երևան):

[87] «Փրկենք Թեղուտը» (2007թ.՝նոյեմբեր, Երևան), «Ջերմուկը հանք չի դառնա» (2011թ.՝ նոյեմբեր, Ջերմուկ, Երևան), «Մեր քաղաքը» (2010 թ.՝ նոյեմբեր, Երևան) , «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» (2010 թ.՝ ապրիլ, Երևան), «SOS! Պահպանենք Աֆրիկյանների ակումբի դեմքը (2011թ.՝ հուլիս , Երևան), «Փրկենք Փակ շուկան» (2012թ.՝ մայիս, Երևան), «Կրթական քաղաքացիական նախաձեռնություն» (2017թ. ապրիլ, Երևան), «Դեմ ենք Ամուլսարի հանքի շահագործմանը» (2018թ.՝ Ջերմուկ), «Դալմայի այգիներ», (2018թ.՝ հունվար), «Արամի 23, Հայաստանի փոքրիկ երգիչներ» (2018թ. ապրիլ)

Ինչպես երևում է գծապատկեր 2.-ից, մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնություններն ունեն տարածքային անհամաչափ տեղաբաշխում Հայաստանի ողջ տարածքով և հիմնականում կենտրոնացած են Երևան քաղաքում: Նախաձեռնությունների ընդամենը 21 %-ն է ձևավորվել մարզերում, ավելին, հաճախ այն իր շարունակությունն է գտել կրկին մայրաքաղաքում:

Քաղաքացիական նախաձեռնությունների առաջին մեկնարկը կապված է «Փրկենք Թեղուտը» նախաձեռնության հետ, որը կազմավորվեց 2007 թվականի նոյեմբերին, առավել ակտիվացավ 2010 թվականին և համառ պայքարով շարունակվում է մինչ օրս: Այժմ նախաձեռնությունը դարձել է հասարակական կազմակերպություն և առավել մասնագիտացված դաշտում է պայքարում Թեղուտի պաշտպանության համար:

Թռչկանի ջրվեժի քաղաքացիական նախաձեռնությունը: Թռչկանի ջրվեժի քաղաքացիական նախաձեռնությունը առաջ եկավ Լոռվա մարզում: Նախաձեռնության կազմավորման ահազանգը եղավ 2010 թվականի ապրիլի 7-ին բնապահպանության նախարարի 179 որոշումը, որտեղ նշված էր, որ «Ռոբշին» ընկերությունը պետք է հիդրոէլեկտրակայան կառուցի ջրվեժի վերևում: Երբ 2011 թվականի սեպտեմբերին սկսվեց ՀԷկ-ի կառուցումը, բողոքի մեծ ալիք սկսվեց և ինքնակազմակերպվեց բնական ժառանգության պահպանությամբ մտահոգ քաղաքացիների մի մեծ խումբ: Ակտիվիստները սեպտեմբերի 8-ին բողոքի ակցիան իրականացրին նախարարության առջև, այնուհետ սկսեցին ակտիվորեն շատանալ վիրտուալ տիրույթում: Երկու շաբաթում ունեցան 5000 հետևորդ և 10000 ստորագրություն հավաքեցին, որպեսզի դադարեցվի շինարարությունը: Շարժումը ստացավ գյուղի լոկալ համայնքի լայն աջակցությունը, ինչպես նաև սա այն դեպքն էր, որին մասնակցեցին նաև մարդու իրավունքների և շրջակա իրավունքների պահպանության Գյումրիի, Վանաձորի և Երևանի ՀԿ-ները: Նոյեմբերի 3-ին հայտարարություն տարածվեց, որ շինարարությունը դադարեցվել է, իսկ դեկտեմբերի 2-ին վերջնականապես հեռացվեցին շինարարական աշխատանքների հետքերը և ջրվեժը ստացավ «պաշտպանվածի» առաքելությունը:

Մաշտոցի պուրակի քաղաքացիական նախաձեռնություն: 2012-թ.-ի փետրվարին Մաշտոցի պուրակի պաշտպանության ակտիվիստները սկեսցին բողոքել Մաշտոցի պուրակում կառուցվող կրպակների դեմ: Այս ակտիվիզմը ոչ միայն մշակութային ժառանգության պահպանությանն էր ուղղված, այլև պայքար էր օլիգարխների դեմ, որոնք փորձում էին անձնական նպատակների համար օգտագործել այն: Ակտիվիստների նպատակն էր առաջ քաշել մի օրակարգ, որը խրախուսում է քաղաքացիական մասնակցությունը, օրենքի գերակայության հարգումը և կայուն զարգացումը[88]: : Ակտիվիստները փետրվարի 11-ից մինչ մայիսի 1-ը շրջափակեցին պուրակը՝ դարձնելով այն **հանրային տարածք[89]:** Պուրակը զբաղեցնելիս ակտիվիստները համերգներ, ցուցահանդեսներ, թատերական ելույթներ և նույնիսկ «թաղման» արարողակարգ իրականացրին «կախարդական Օլիգ Գարխյանի» (այսինքն, պարոն օլիգարխ) համար՝ ստվարաթղթի դագաղով, որը հետագայում

[88] Wallace, K.,"Happenings at Mashtots Park" Organize!, Yerevan, Armenia: Institute for Democracy and Human Rights, 2012.

[89] Մաշտոցի պուրակի քաղաքացիական նախաձեռնության ընթացքում առաջին անգամ Հայաստանում մշակութային տարածքը վերածվեց հաբերմասյան հանրային տարածքին: Վերջինիս մոտեցմամբ այն բնորոշվում էր որպես հաղորդակցական տարածք, որտեղ մարդիկ կարող են քննարկել փոխադարձ և հանրային մտահոգություններ, փաստեր, իրադարձություններ և կարծիքներ (Habermas, J., "The Structural Transformation of the Public Sphere. Cambridge: Polity Press. 1992, "Between Facts and Norms: Contributions to a Discourse Theory of Law and Democracy".Oxford: Polity Press. 1996, p.133): Այստեղ հանրային հաղորդակցությունը պոտենցիալ ունի ստեղծելու ռացիոնալացման և քննադատաբար մեկնաբանման լայն հնարավորություններով հանրային կարծիք: Իսկ հասարակական կարծիքի ձևավորման համար պետք է երաժշխավորված լինի բոլոր քաղաքացիների «մուտքը» քննարկումների դաշտ, ապահովված լինի «հասանելիությունը» և երաշխավորված՝ արտահայտվելու ազատությունը: Այստեղ կարևոր է ընդգծել, որ Հաբերմասը կազմակերպման արդյունավետությունը տեսնում է ազատ հաղորդակցման, ակտիվ քննարկումների, փոխզիջման հիմքերով որոշումների կայացման և ըստ այդմ ռացիոնալ պահանջների ձևակերպման պարագայում (Habermas J., " The public sphere: an encyclopaedia article"// New German Critique, 3, 1974, pp. 49–55.): Այսպիսով Հաբերմասը առօրյա հաղորդակցության պրակտիկան կապեց ռացիոնալ ներուժի հետ, որը փաստորեն հստակորեն գործեց Մաշտոցի պուրակի պաշտպանության ժամանակ (Habermas, J., The Structural Transformation of the Public Sphere: An Inquiry into a Category of Bourgeois Society. Cambridge: MIT Press. 1991):

դրվեց Երևանի կենտրոնական փողոցներում: 2012 թ. մարտի 3-ին ակտիվիստները հատուկ միջոցառում անցկացրեցին այգում՝ նշելով ***ինքնորոշված քաղաքացիների ծնունդը***՝ կարդալով Մարդու իրավունքների և համընդհանուր հռչակագրից հատված. «*Մենք, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներս, մեր սահմանադրական իրավունքներն ու պարտականություններն ենք իրականացնում և լինելով այս հասարակական տարածքի, մեր քաղաքի և մեր պետության տերերը, պահանջում ենք, որ մեր ծառաները՝ քաղաքի ներկայացուցիչները և այլ մարմիններ, կատարեն իրենց սահմանադրական գործառույթներն ու պարտականությունները, որոնց համար վճարվում են հանրության կողմից.*[90]*»,- ասված էր հայտարարության տեքստում*: Արդար և անկախ քաղաքացիական դատարանի կողմից ընդունված «վճիռը» պարզել է, որ քաղաքապետարանը ստիպված է ապամոնտաժել այգին և վերականգնել իր նախորդ տեսքը: 2012 թ. մայիսի 1-ին նախագահ Սերժ Սարգսյանը հրամայեց ապամոնտաժել շինարարական աշխատանքները: Թեև ակտիվիստները հասան իրենց ***առաջնային*** նպատակին, այսինքն շինարարության դադարեցմանը, բայց օրենքի գերակայության, օլիգարխների անպատժելիության և համակարգում կոռուպցիայի դեմ պայքարին, այսինքն իրենց ավելի մեծ նպատակներին չկարողացան հասնել:

Աբովյան 32-ի կամ Պրոֆեսորների շենքի քաղաքացիական նախաձեռնությունը: Հայաստանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված, Երևան քաղաքի Աբովյան 32 հասցեում գտնվող Պրոֆեսորների շենքի[91] քաղաքացիական նախաձեռնությունը սկսվեց այն ժամանակ, երբ հայտարարություն տարածվեց, որ տեղի է ունենալու հուշարձանի փոփոխություն[92]: Մի քանի ճարտարապետներ և պարզապես Երևանի քաղաքացիներ սկսեցին պայքարել նախաձեռնության տեսքով վերոնշյալ խնդրի դեմ[93]: Քաղաքացիական ակտիվիստների գործողությունների[94] շնորհիվ ՀՀ մշակույթի նախարարությունը ոստիկանության հետ համատեղ դադարեցրեց թիվ 17 բնակարանի մուտքի բացման աշխատանքները: Իսկ Երևանի քաղաքապետարանը անվավեր ճանաչեց 2018-ի մայիսի 3-ին տրված շինարարության թույլտվությունը»[95]:

«Մեր քաղաքը» քաղաքացիական նախաձեռնություն ի պաշտպանություն Աֆրիկյանների տան: Տերյան 11 հասցեում գտնվող Աֆրիկյանների շենքը կառուցվել է 19-րդ դարի վերջին: Կառավարության որոշմամբ՝ Աֆրիկյանների շենքը պետք է ապամոնտաժվեր՝ «Հին Երևան» նախագծով վերակառուցվելու նպատակով: «Մեր քաղաքը» նախաձեռնության անդամները մայիսի 12-ին բողոքի ակցիա անցկացրին Աֆրիկյանների շենքի դիմաց՝ պահանջելով պահպանել և վերականգնել պատմական շինությունը: Շենքի պահպանության համար պայքարող քաղաքացիները հերթապահություն էին իրականացնում տարածքում՝ փորձելով ամեն կերպ խոչընդոտել ու թույլ չտալ շենքի քանդումը: Այս նախաձեռնությունը դեռ ընթացքի մեջ է և վերջնական հանգուցալուծման չի հասել:

---

[90] Institute for democracy and human rights. 2012. Analyses: Mashtots Park Civic Struggle UNFINISHED.

[91] Շենքը կառուցվել է 1934 թվականին անվանի ճարտարապետ Սամվել Սաֆարյանի նախագծով: Շենքում ապրել եւ ստեղծագործել են ՀՀ մշակույթի, գիտության, պետական ականավոր գործիչներ, այդ թվում՝ Ազգային պատկերասրահի հիմնադիր, արվեստաբան Ռուբեն Դրամբյանը, անվանի լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը, հայտնի վիրաբույժ Համբարձուկ Քեչեկը, հայ արվեստի դասականներ Գաբրիել Գյուրջյանը, Սեդրակ Առաքելյանը, Փանոս Թերլեմեզյանը, գրողներ Ստեփան Զորյանը, Վահան Թոթովենցը, Զապել Եսայանը, երգչուհի Հայկանուշ Դանիելյանը, կոմպոզիտոր Հարո Ստեփանյանը եւ այլք:

[92] Չունենալով բնակիչների համաձայնությունը՝ շենքի առաջին հարկի բնակարաններից մեկի սեփականատերը շինարարություն էր սկսել՝ շենքի դիմային մասից նոր մուտք բացելու եւ հետագայում բնակարանը բիզնես նպատակով օգտագործելու համար:

[93] Ոսկանյան, Ա., Մշակույթի նախարարությունը դեռ չի հասկանում ինչ է «պահպանելը», https://www.panorama.am/am/news/2018/08/03/Մշակույթի-նախարարություն/1987256 (28.03.2019):

[94] Հատկանշականն այստեղ այն էր, որ այս նախաձեռնությունը օգտվեց «դեմոկրատիայի դպրոց» կոչված կոնցեպտից և գրագիտորեն կարողացավ ներկայացնել խնդիրը, մեջբերելով օրենքները և շինաշխատանքների անթույլատրելիությունը: Մասնավորապես նշվում էր, «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, ըստ որի՝ հուշարձանների քանդումն արգելվում է:

[95] «Պրոֆեսորների» հուշարձան-շենքը կխուսափի՞ վտանգից. փոխնախարարի մեկնաբանությունը Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝https://armlur.am/833629/, Ա. Բաբաջանյան https:// armlur.am/833629/

«Մեր քաղաքը» քաղաքացիական նախաձեռնությունը ի պաշտպանություն Աբովյան 3 հասցեում գտնվող «ԱՕԿՍ»-ի շենքի: «Մեր քաղաքը» քաղաքացիական նախաձեռնության մասնակիցները կազմակերպել էին բողոքի ակցիա էին կազմակերպել ի պաշտպանություն Աբովյան 3 հասցեում գտնվող պատմամշակութային արժեք հանդիսացող «ԱՕԿՍ»-ի (Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական ընկերության): Նախաձեռնության առիթը նոր շինարարության արդյունքում այն քանդելու որոշումն էր[96]: «ԱՕԿՍ-ը մերն է» պահանջով «Մեր քաղաքը» նախաձեռնության անդամները դադարեցրեցին անօրինական շինարարությունը:

Քարահունջի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը: Քարահունջի շուրջ ստեղծվել է տասնյակ հազարավոր անհատներից և տարբեր կազմակերպություններից միավորված քաղաքացիական շարժում, որը հանդես է գալիս ի պաշտպանություն մշակութային ժառանգության: Նախաձեռնության ակտիվիստները ֆեյսբուքյան տիրույթում քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունից բացի, դիմում են նաև ակտիվ և կոնկրետ գործողությունների՝ նամակներ հղելով երկրի բարձրաստիճան պաշտոնյաներին: Նրանք ներկայացնում են հստակ պահանջներ, որոնք հիմնականում ուղղված են Քարահունջի ամբողջականության պահպանմանը, պեղումների դադարեցմանը: Ամենահետաքրքիրն այն է, որ քաղաքացիական նախաձեռնությունը ունի նաև քաղաքական պահանջներ, ընդհուպ փոխնախարարի և նախարարի պաշտոնանկությունը*:* «Քարահունջի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության անդամները կազմակերպել են նաև ստորագրահավաք պեղումները դադարեցնելու դեմ, որը արդեն հատել է 7500-ի սահմանները[97]: Հարկ է նշել, որ նախաձեռնությունը աստիճանաբան ինստիտուցիոնալացվում է և վերջրինս քայլերն ու գործողությունները դառնում են ծրագրավորված: Քարահունջի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը դեռ իր հանգուցալուծմանը չի հասել, բայց ակտիվիստների պնդմամբ նրանք պատրաստ են ցանկացած մարտահրավերի:

Քաղաքացիական նախաձեռնությունների խնդիրները Հայաստանում: Հայաստանում ՔՆ-ի աճն ու զարգացումը ընթանում են ոչ ստանդարտ եղանակներով, քանի որ վերջինիս զարգացումն էլ ունեցել է ոչ համաչափ ընթացք: Կան ֆունդամենտալ խնդիրներ, որոնք հասարակությունը դեռ պետք է հաղթահարի:

Առաջին խնդիրը կապված է քաղաքացիական նախաձեռնությունների անհամաչափ տեղաբաշխման և տեղեկատվության հասանելության հետ Հայաստանի ողջ տարածքով: Նախաձեռնությունները հիմնականում ձևավորվում են Երևանում և դեռևս չունեն հասանելիություն դեպի մարզեր: Թեև Երևանում կարծես թե խնդիրը հաղթահարված է, բայց Հայաստանի բազմաթիվ համայքներում այն մնում է խնդրահարույց: Գյուղական համայնքներում մատչելի չեն հիմնական տեղեկատվամիջոցները՝ մասնավորապես հեռուստատեսային լուսաբանումը և համացանցը: Այն ունի նաև սոցիալական պատճառներ, քանզի ոչ բոլորը հնարավորություն ունեն օգտվելու ժամանակակից տեղեկատվական գործիքներից, ավելին այստեղ կա նաև այդ ամենից օգտվել իմանալու հավելյալ խնդիրը:

Երկրորդ խնդիրն այն է, որ ՔՆ-ը, որպես քաղաքացիական հասարակության ամենաառաջնային դրսևորումներ, ունեն առավելապես արևմտյան կողմնորոշում և պատմականորեն ձևավորված չեն Հայաստանում: «Քաղաքացիական հասարակություն» հասկացությունն առավել բնորոշ է արևմտյան հասարակությանը, իսկ հեխորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում այն նոր իրողություն է[98]: Այն ունի ընդամենը երե-

[96] Թամամյան Ա.,, Օհանյան Ս., Առավոտ լրատվական, https://www.aravot.am/2013/02/11/195091/(28.03.2019).

[97]«Փրկենք Քարահունջ պատմական համալիրը», https://www.change.org/p/փրկենք-քարահունջ-պատմական-համալիրը-save-the-historical-monument-of-carahunge-спасём-исторический-памятник-караундж?fbclid=IwAR2W6jN8Kk619tF6pl5MvCSO-IPdzhOeoq4h6JKFzd6Jesl1jsNKNVOXQmg (02.02.2019).

[98] Այդ առումով սոցիոլոգ Գ. Պողոսյանը նշում է, որ Արևմուտքում սկզբից ծագել է պետությունը, այնուհետև մասնավոր ձեռներեցությունը և նոր միայն հասարակական շարժումներն են առաջացել, ներառյալ՝ հասարակական կազմակերպությունները. «Դեմոկրատական մեծ ավանդույթներ ունեցող երկրներում, օրինակ՝ Անգլիայում, Միացյալ Նահանգներում, սկզբնական շրջանում ձևավորվեց պետությունը, այնուհետև մասնավոր

սուն տարվա պատմություն և դեռևս ձևավորման փուլում է: Ծագելով արևմուտքում՝ այն կրում է այդ հասարակության արժեքային համակարգը, և այդ առումով հետխորհրդային երկրներում (ներառյալ՝ Հայաստանում) քաղաքացիական հասարակության ձևավորումն ընթանում է արևմտյան և հայ էթնոսի ավանդական մշակույթների փոխներթափանցման հիման վրա[99]: Այսինքն Հայաստանում կա նաև ՔՆ-ների ռեալիզացիայի խնդիր: Փաթմենը նշում է, որ ՔՆ-ը ունի շեշտադրված պատմական առանձնահատկություններ կապված արևմտյան քաղաքակրթության հետ[100]: Բլանեյը ևս նշում է, որ ՔՆ-ները ունեն հստակ և մաքուր արմատներ Արևմտյան փորձառության մեջ և, հետևաբար, կարող են ունենալ միայն սահմանափակ առնչություն ոչ արևմտյան համատեքստում: Եվ եթե քաղաքացիական հասարակության հայեցակարգը պատմականորեն կոնկրետ է որոշակի ժամանակի և տեղանքի համար, ապա այն կարող է **զգայուն** լինել պատմության, մշակույթի և տնտեսության տարբերությունների հանդեպ[101]: Այսպիսով, քաղաքացիական նախաձեռնությունները որպես քաղաքացիական հասարակության ժառանգություն դժվարությամբ են հարմարվում ոչ արևմտյան երկրներում, ինչպիսին Հայաստանն է և կարող են զգայուն լինել բոլոր այն խնդիրների հանդեպ, որոնք ունեն տեղական նշանակություն:

Երրորդ խնդիրը բողոքի մշակույթի բացակայությունն է և երկխոսության մշակույթի թուլությունը, որը իրականում պետք է լինի ոչ թե ընդդեմ որևէ համակարգի, այլ հանուն արժեքների պահպանության: Թե՛ իշխանության և թե՛ երրորդ դասի ներկայացուցիչները ընդունում են բացարձակապես բոլոր ոլորտներում իշխանություն-հասարակություն երկխոսության անհրաժեշտությունը, բայց բողոքում են քաղաքացիական հասարակության կոմպետենտության պակասից, ինչն էլ անհնար է դարձնում արդյունավետ երկխոսության ծավալումը: Իշխանության և հասարակության միջև երկխոսության վրա էական ազդեցություն ունեցող բացասական գործոն են համարվում վառ արտահայտված խմբային շահերը, ներհամայնքային կապերը, խորհրդային ժառանգության արդյունք հանդիսացող հասարակության՝ որոշ չափով փակ լինելը:

Չորրորդ՝ խնդիրներից մեկն էլ ձևակերպված խնդիրների վրա հիմնված հանրության ամորֆ վիճակն է: ՔՆ-ի կողմից իշխանությունների համար լուրջ մարտահրավեր կլինի ***ձևակերպված խնդիրների*** վրա հիմնված հանրության ձևավորումը, ինչը սահմանվում է որպես խնդիրները հասկանալու, ձևակերպելու, ինչպես նաև իրազեկ պահանջների ներկայացման և հետևողականության կարողություն: Խնդիրների ձևակերպումը պետք է լինի ներքնից, արտահայտի հանրության կամքը, արդյունքում կնպաստի բնակչության մարգինալ խմբերի համախմբմանը: Չձևակերպված խընդիրների վրա հիմնված հանրության ձևավորմանը նշանակում է հաջորդ քայլ հայ քաղաքացիական հասարակության զարգացման մեջ, ինչն էլ իր հերթին ենթադրում է երկրի զարգացում:

Հինգերորդ՝ Հայաստանում լայնորեն տարածված է անտարբերությունը, իսկ մշակութային արժեքների պահպանության տեսանկյունից բացակայում է սեփականության և զորացված լինելու զգացումը: Հայաստանի հասարակությունը դեռևս մեծապես շարունակում է մշակութային ժառանգության պահպանությանը խնդիրները վերագրել մասնագիտական և պետական ոլորտին:

Եզրակացություն: ՔՆ-ների ծագումը և աճը վերջին 11 տարիների ընթացքում կարելի է համարել հասարակության գիտակցության նոր «զարթոնք» և պնդել, որ դա պայմանավորված էր ինչպես նոր սերնդի հետ, որը խորհրդային ռեժիմի կյանքով չէր ապրել և այդ ապրելաձևին անմիջականորեն չէր տիրապետում, այնպես էլ ՀՀ մշակութային քաղաքականության պետական մոտեցումներից որոշակիորեն հրաժարման հետ: Մշակութային ժառանգության պահպանության նախաձեռ-

---

սեկտորը, հետո միայն երրորդ սեկտորը՝ հասարակական կազմակերպությունները: Հայաստանում այս երեքը կայացան, ձևավորվեցին և զարգացան միաժամանակ (Погосян Г. А. , նույն տեղում, էջ 223):

[99] Գալստյան Ն. Մ. «Հայաստանում քաղաքացիական հասարակության մոդելի ձեվավորման խնդիրը էթնոմշակութային համատեքստում», 2011, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 3 . էջ 255-268:

[100] Putnam, R. D., "Bowling Alone: The Collapse and Revival of American Community". New York: Simon and Schuster. 2000.

[101] Blaney, D. L. and Pasha M. K., "Civil Society and Democracy in the Third World: Ambiguities and Historical Possibilities', Studies in Comparative International Development" 28(1), 1993, pp. 3–24.

նությունների աճին նպաստեց նաև մշակույթի հանդեպ տարվող միջազգային քաղաքականությունը, որը խիստ կարևորում է մշակույթի հասարակական պահպանության գործառույթը: Նրանց աճին նպաստեց նաև նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը: Նրանք կարողացան ազդեցություն ունենալ Հայաստանի սոցիալ-մշակութային և քաղաքական զարգացումների վրա, կարողացան նպաստել մշակութային ժառանգության պահպանությանը և ստեղծեցին քաղաքացիական նոր մշակույթ: Փաստորեն, այն, ինչ տևական ժամանակ չհաջողվեց ՀԿ-ներին և արևմտյան դոնորներին, հաջողվեց ՔՆ-ներին: ՔՆ-ների առաջացումը Հայաստանում փաստեց քաղաքացիական հասարակության զարգացման մասին, և փոխեց վերջինիս մասին խորհրդային ընկալումներն ու պրակտիկաները: Թեև ՔՆ-ները կենտրոնացած են կոնկրետ խնդիրների շուրջ, բայց նրանց պայքարն ուղղված է ավելի մեծ խնդիրների՝ կոռուպցիայի, օլիգարխիկ լծակների, օրենքի բացակայության, քաղաքական գործիչներից հիասթափության և այլ խնդիրների դեմ: Հոդվածում ներկայացվեց նաև ՔՆ-ի նշանակությունը այնպիսի իրողություններին, ինչպիսիք են սոցիալական կապիտալի ամրապնդումը և ժողովրդավարությունը, այդ ամենը կապելով մշակութային ժառանգության պահպանության կոնցեպտի հետ: Թեև ՔՆ-ը կարողացան ազդել մշակութային քաղաքականության վրա և ընդլայնել հասարակության մասնակցությունը ոլորտում, այնուամենայնիվ նրանք դեռևս ֆունդամենտալ խնդիրների հաղթահարման կարիք ունեն:

Գրականության ցանկ

1. Abom, B., “Social Capital, NGOs, and Development: A Guatemalan Case Study.” Development in Practice, 14 (3), 2004, pp. 342–353.
2. Abrahamian, L., Armenian Identity in a Changing World Costa Mesa, CA: Mazda Publishers, 2006, p. 253.
3. Abrahamian, L., Hm. “Civil Society Born in the Square: The Karabagh Movement in Perspective.” In The Making of NagornoKarabagh, Springer. 2001. pp.116–134.
4. Alison van Rooy, A. Civil Society and the Aid Industry: The Politics and Promise, London: Earthscan. 1998, p. 30.
5. Arendt, H., “The Human Condition”, Chicago & London: The University of Chicago Press, 1958.
6. Barber, B. R., Managing Europe’s Cultural Heritage: A Democratic Perspective. In Visies op erfgoed in Vlaanderen en Europa. Visions of Heritage in Flanders and Europe. Optiques de gestions du patrimoine en Flandre et en Europe, edited by Joris Capenberghs, Jan Cools, and Patrick De Rynck, Culturele Biografie Vlaanderen vzw, Antwerpen, 2003. pp. 80–84.
7. Barkan, S. E., "Explaining Public Support for the Environmental Movement: A Civic Voluntarism Model”, 2004, Social Science Quarterly, University of Maine, pp. 913-937.
8. Batliwala, S., "Grassroots Movements as Transnational Actors: Implications for Global Civil Society." Voluntas: International Journal of Voluntary and Nonprofit Organizations 13(4): 2002, pp.393-409. (p. 396).
9. Blaney, D. L. and Pasha M. K., “Civil Society and Democracy in the Third World: Ambiguities and Historical Possibilities’, Studies in Comparative International Development” 28(1), 1993, pp. 3–24.
10. Blue, R. N., Payton, D. E. and Kharatyan, L.Z., Armenia NGO Sector Assessment. NGO Strengthening Program. Yerevan: World Learning, Armenia. 2001.
11. Blue, R.N., and Ghazaryan, Y. G.,”Armenia NGO Sector Assessment: A Comparative Study. NGO Strengthening Program”, Yerevan, Armenia: World Learning for International Development. 2004.
12. Bobbio, N.,”Gramsci and the Concept of Civil Society”. In: KEANE, J. (ed.) Civil Society and the State: New European Perspectives. London: Verso, 1988, pp. 82-92, (p.87)):
13. Carothers, T., “ Aiding Democracy Abroad: The Learning Curve”, Washington, DC, Carnegie Endowment for International Peace. 1999.
14. Carroll, T. F., “Intermediary NGOs: The Supporting Link in Grassroots Development”. Kumarian Press. 1992.
15. Castells, M., Networks of Outrage and Hope: Social Movements in the Internet Age, Cambridge, Polity. 2012.
16. Caucasus research resource center. Caucasus Barometer. Yerevan: CRRC,2010.
17. Council of Europe Framework Convention on the Value of Cultural Heritage for Society, Article 2,Council of Europe Treaty Series - No. 199, Faro, 27.10.2005, https://rm.coe.int/1680083746 (28□03□2019).
18. Danielyan, E., “Armenia. In Nations in Transit: Civil Society, Democracy and Market in East Central Europe and Newly Independent States, edited by Adrian Karatnycky, Alexander Motyl, and Amanda Schnetzer”,New York: Freedom House. 2001.
19. Dekker, P., Halman,L., “Voluntering and Values: An Introduction’ A Cross-Cultural Perspective”. New York: Kluwer Academic/ Plenum Publishers, 2003. pp.1–17.
20. Dudwick, N., “The Mirage of Democracy: A Study of Post-Communist Transitions in Armenia (Project on Democratization and Political Participation in Post-Communist Societies”, United States Department of State Bureau of Intelligence and Research, 1995.

21. Edwards, M., Global civil society and community exchanges: A different form of movement. Environ. Urban. 13(2), 2001, pp. 145–149.

22. Expert Meeting on community involvement in safeguarding intangible cultural heritage: towards the implementation of the 2003 convention, 13-15 March 2006, Tokyo, Japan REPORT, Published by Intangible Heritage Section Division of Cultural Heritage, Sector for Culture UNESCO, Asia/Pacific Cultural Centre for UNESCO (ACCU), 2006, pp. 6-15.

23. Fifth European Conference of Ministers responsible for the Cultural Heritage, Portoroz˘, Slovenia, 6-7 April 2001.

24. Fraser, N., "Rethinking the public sphere: A contribution to the critique of actually existing democracy", 1990, Social Text, no. 25/26, 1990, pp. 56–80.

25. Freudenberg, N., and Steinsapir, C., "Not in Our Backyards: the Grassroots Environmental Movement. In R. E. Dunlap and A. G. Mertig, American Environmentalism: The U.S. Environmental Movement, 1970-1990, Philadelphia, Taylor & Franci: 1992, pp. 27-37.

26. Fuchs, Ch., "Social Media and the Public Sphere", 2014, pp. 57-101.

27. Glasius, M. & Pleyers, G., "The Global Moment of 2011: Democracy, Social Justice and Dignity. Development and Change 44, 2013, pp.547-567:

28. Gramsci, A., Selections from the Prison Notebooks, ed. by Q. Hoare and G. Nowell Smith. London: Lawrence and Wishart. 1971. p. 285.

29. Greenberg, J., There's Nothing Anyone Can Do About It: Participation, Apathy and 'Successful' Democratic Transition in Postsocialist Serbia. Slavic Review, VL 69, 2010, pp. 41-64.

30. Griffin, K., Kelly, T. & Mckinley, T., "Growth, Inequality and Poverty in Armenia": A Report Commissioned by the Poverty Group, Bureau for Development Policy, United Nations Development Programme. New York: UNDP. 2002.

31. Habermas J., " The public sphere: an encyclopaedia article"// New German Critique, 3, 1974, pp. 49–55.

32. Habermas, J., "The Structural Transformation of the Public Sphere. Cambridge: Polity Press. 1992, "Between Facts and Norms: Contributions to a Discourse Theory of Law and Democracy".Oxford: Polity Press. 1996, p.133.

33. Habermas, J., The Structural Transformation of the Public Sphere: An Inquiry into a Category of Bourgeois Society. Cambridge: MIT Press. 1991.

34. Hakobyan, L., Tadevosyan M., Sardar A. and Stepanyan A., Armenian Civil Society: From Transition to Consolidation. Analytical Country Report. CIVICUS Civil Society Index. Yerevan, Armenia: Counterpart International. 2010, http://program.counterpart.org/Armenia/?page_id=48 (28□03□2019).

35. Henry, L. A., Two Paths to a Greener Future: Environmentalism and Civil Society Development in Russia. Demokratizatsiya , Spring 10, 2002, pp. 184-206 .

36. Howard, M., "The Weakness of Civil Society in Post-Communist Europe . Cambridge, UK: Cambridge University Press. Inglehart, 2003.

37. Howell, J., and Pearce, J., " Civil Society and Development. A Critical Interrogation. Boulder", CO: Lynne

38. Ilczuk, D□, "Cultural Citizenship. Civil Society and Cultural Policy in Europe". Boekmanstudies, Amsterdam, 2001, pp. 20–21.

39. Institute for democracy and human rights. 2012. Analyses: Mashtots Park Civic Struggle UNFINISHED.

40. Ishkanian, A., "Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia". London and New York: Routledge. 2008.

41. Ishkanian, A., "Engineered Civil Society: the impact of 20 years of democracy promotion on civil society development in the former Soviet countries", 2014, pp.150-170.

42. Ishkanian, A.,. "Self-Determined Citizens? New Forms of Civic Activism and Citizenship in Armenia." Europe Asia Studies 67 (8), 2015, pp.1203–1227.

43. Jantulová, Šťovíčková, M. "Analýza procesu profesionalizace v občanském sektoru očima jeho aktérů", Sociální studia (1), 2005. pp.131–146.

44. Jenkins, J. C., "Resource Mobilization Theory and the Study of Social Movements." Annual Review of Sociology 9:1, 1983, pp. 527-553.

45. Kaldor, H. M., "Global Civil Society: An Answer to War".Cambridge: Polity Press. 2003, p.19.

46. Kaldor, M. & Selchow, S. , The 'Bubbling Up' of Subterranean Politics in Europe. Civil Society and Human Security Research Unit, London School of Econoimcs. 2012, http://eprints.lse.ac.uk/44873/1/The%20%E2%80%98bubbling%20up%E2%80%99%20of%20subterranean%20politics%20in%20Europe(lsero).pdf (28□03□2019)□

47. Kempton, W., D. C. Holland, et al. (2001). "Local Environmental Groups: A Systematic Enumeration in Two Geographical Areas." Rural Sociology ,66(4), pp. 557-578.

48. Linz, J. and Stepan, A., "Toward Consolidated Democracies." In Consolidating the Third Wave Democracies: Themes and Perspectives, edited by Larry Diamond, Baltimore and London: Johns Hopkins Univ. Press, 1997, pp. 14– 33.

49. Mandel, R., Introduction: Transition to Where? Developing Post-Soviet Space.. Slavic Review, 71, 2012, pp.223-233.

50. National Statistical Service of Armenia, Social Snapshot and poverty in Armenia, 2012, https://www.armstat.am/en/?nid=81&id=1397 (27□02□2019)□

51. Paturyan, Y., Gevorgyan, V. and Matevosyan, M., "Is 'Googling' a Technique? What the Internet Can Tell Us about the Non-Governmental Sector in Armenia." Haigazian Armenological Review 34 (July): 2014, pp.257–267□

52. Paturyan, Y., Gevorgyan, V., "The Armenian third sector twenty years after the post-soviet transition: continuity or change?",American University of Armenia, Assistant Director of Turpanjian Center for Policy Analysis, 2005, pp.1-20.

53. Putnam, R. D., “Bowling Alone: The Collapse and Revival of American Community”. New York: Simon and Schuster. 2000.

54. Putnam, R., D. Making Democracy Work: Civic Traditions in Modern Italy. Princeton, New Jersey: Princeton University Press. 1993, pp 83-99.

55. Rochester, C., Paine, A.E., Hewlett, S. Zimmeck, M., “Volunteering and Society in the 21st Century”. Palgrave: Macmillan, 2010, p.38-42.

56. Rosenstein, C., “How Cultural Heritage Organizations Serve Communities: Priorities, Strengths and Challenges”. The Urban Institute, Washington, D.C. , 2006 p.1.

57. Rueschemeyer, D., Stephens, E., and Stephens, J., (eds), “Capitalist Devleopment and Democracy”, 1992, Chicago, IL: University of Chicago Press. p. 6.

58. Encarnacion, O., “Beyond Civil Society: Promoting Democracy after September 11”, Orbis 47(4): 2003, pp. 705–720.

59. Sampson, S., Beyond Transition: Rethinking Elite Configurations in the Balkans’ in C Hann (ed), Postsocialism: Ideals, Ideologies and Practices in Eurasia. London: Routledge. 2002.

60. Smith, D.H., ‘The Rest of the Nonprofit sector: Grassroots Associations as the Dark Matter Ignored in Prevailing “Flat Earth” Maps of the Sector’. Nonprofit and Voluntary Sector Quarterly, 1997b, 26 (3): pp.114–131

61. Smith, D.H., “Grassroots Associations Are Important: Some Theory and a Review of the Impact Literature”. Nonprofit and Voluntary Sector Quarterly, 1997a, 26 (3), pp.269–306.

62. Stallings, R. A., "Patterns of Belief In Social Movements: Clarifications from an Analysis of Environmental Groups." The Sociological Quarterly ,14:4, 1973, pp. 465-480.

63. Stern, P. C., Dietz, T., Abel, T., Guagnano, G.A. and Kalof, L., "A Value-Belief-Norm Theory of Support for Social Movements: The Case of Environmentalism." Human Ecology Review 6(2), 1999, pp.81-97.

64. Stiglitz, J.,“Towards a new Paradigm for Development: Strategies, Policies, and Processes”, Prebisch Lecture, UNCTAD, Geneva October 19, 1998.

65. The Merriam-Webster Collegiate Dictionary, Elevent edition, Incorporated Springfield, Massachusetts, U.S.A., https://www.merriam-webster.com/ dictionary/ grassroots (21.01.2019).

66. Tocqueville, A., Mansfield, H. C., & Winthrop, D., Democracy in America. Chicago: University of Chicago Press. 2000.

67. Toepler, S., “Grassroots Associations Versus Larger Nonprofits: New Evidence from a Community Case Study in Arts and Culture’, Nonprofit and Voluntary Sector Quarterly “ 32 (2), 2003, pp. 236–251.

68. Transparency International. 2014. Overview of Corruption and AntiCorruption in Armenia,առցանց հասանելի է http://www.transparency.org/whatwedo/ answer/overview_of_corruption_and_anti _corruption_in_armenia (15.01.2019):

69. UNESCO World Commission on Culture and Development, UNESCO Universal Declaration on Cultural Diversity was adopted by the General Conference of UNESCO (31st Session), Paris, 15 Oct.-3 Nov,2001.

70. UNESCO, Convention concerning the protection of the world cultural and natural heritage, World Heritage Committee,Twentieth session,Merida, Yucatan, Mexico,2-7 December 1996, p. 14.

71. UNESCO, Convention for the Safeguarding of Intangible Cultural Heritage, 2003, http://www.unesco. org/culture/ich/index.php?pg=00006 (28.03.2019).

72. UNESCO, Sexennial Report of the Executive Board to the General Conference on the Contribution made to UNESCO’s activities by NonGovernmental Organisations (2001–2006), 176 EX/46, Paris, 9 March 2007.

73. United Nations Educational, Scientific and Cultural Organization, International Council on Monuments and Sites International Committee on Risk Preparedness, United Nations Office for Disaster Risk Reduction. Heritage and Resilience: issues and opportunities for reducing disaster risks. Fourth Session of the Global Platform on Disaster Risk Reduction (Geneva, 18- 23 May 2013).

74. Universal Declaration on Cultural Diversity adopted by the United Nations Economic, Social and Cultural Organization (UNESCO) in 2002).

75. Weffort. F. C., “Why Democracy?, in Stephen A. (ed) “Democratizing Brazil: Problems of Transition and Consolidation”. New York: Oxford University Press, 1989, p. 349.

76. Wollebaek, D. Change in Local Voluntary Associations. Ph.D. Thesis. Bergen: University of Bergen. 2009.

77. Погосян Г. А., “ Современное Армянское общество: Особенности трансформации”, М., 2005, с. 223.

78. Фукуяма, Ф., “Доверие. Социальные добродетели и путь к процветанию”, М., 2004.

79. Գալստյան Ն. Մ. «Հայաստանում քաղաքացիական հասարակության մոդելի ձեվավորման խնդիրը էթնոմշակութային համատեքստում», 2011, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 3 . pp. 255-268.:

80. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ մշակույթի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ու օգտագործման բնագավառներում կառավարումն իրականացնող լիազորված մարմնի իրավասություններ վերապահելու եվ ՀՀ կառավարության 1998 թվականի ապրիլի 6-ի N 229 ու 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1112 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին, N 1549-Ն, ընդունված 27.11.2003թ.:

81. ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդված. «Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո»: (Ընդունվել Է 1995թ. հուլիսի 5-Ի ՀՀ հանրաքվեով, փոփոխությունները՝ 2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Հանրաքվեով):